Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԻՒ 64

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՎԱՔՍՈՒՆԸՁՈՐՅԵՐՐՈՐԴ

3 ՕԳՈՍՏՈՍ 1873

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1873 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՈՒՂԹԱՐ

ՔԱՋՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԿԴ.

3 ՕԳՈՍՏՈՍ 1873

ՆԱԽԱԳԱՀ · — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՏԵՆԱՊԵՏ · — ՏԱՏԵԱՆ Յ. ԷՖԷՆՏԻ (Ա. Ատենապետ)

Ժամը 7 ½ին Ատեանը բացուեցաւ 'ի Ներկայութեան մեծագոյն մասին Երեսփոխանաց, որոց վերջին թիւը 78 ի հասաւ, 'ի բաց առնելով քաղաքական ժողովոյն անգամ եղող Երեսփոխանները՝ որք ներկայ չէին։

Ատենապետ էֆ. Ծանոյց թէ այսօրուան նիստը Արքազան Պատրիարք Հօր մասնաւոր հրաւիրագրովը գումարուած արտաքոյ կարգի նիստ մը ըլլալով, նախընթաց նստին Ատենագրութեան վաւերացումը յաջորդ նստին կը մնայ. և կարդաց Արքազան Պատրիարք Հօր առ իւրաքանչիւր Երեսփոխան ուղարկած հրաւիրագիրն, որոյ աւտսիկ պատճէնը.

Մեծապատիւ Երեսփոխան էֆէնտի.

Մեր պաշտօնէութեան ընթացքն երթալով ծանրացաւ եւ դժուարացաւ. այլ եւս անհնարին է այս կերպով յառաջ վարել զայն։

Ուստի իբրեւ Առհմանադրական Պատրիարք Հայոց, պարտաւոր լինելով կանխապէս եւ ըստ օրինի հրաժարականս Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ պատկառելի ատենին մատուցանել, կը հրաւիրիմ զձեզ որ յառաջիկայ ուրբաթ օր հրամայէք 'ի Ղալաթիա, ուր ըստ սովորութեան ժամ վնջին ատեան պիտի բացուի։

Կը յուսամք թէ խնդրոյն կարեւորութիւնն զգալով որոշեալ ժամադրութիւնը ճշդիւ կատարելու կը փութայք։

31 Յուլիս 1873 — Մնամ աղօթարար
'ի Պատրիարքարան Հայոց — (ստորագրութիւն)
Կ. Պոլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս որ ծանուցի արդէն, այս նիստն արտաքոյ կարգի է և ինչ պատճառաւ գումարուիլը Արքազան Պատրիարք Հօր հրաւիրագրէն՝ զոր հիմա կարդացի, յայտնի եղաւ. ուստի կը յուսամ և կաղաչեմ իսկ ներկայ գտնուող Երեսփոխանաց ամենայլ որ իրենց իմաստուն և խոհեմ ըլլալուն ապացոյցը տալու համար իրենց վիճաբանութեան մէջ ամենևին կիրք չբանեցնեն, և իրենց բարի օրինակաւն զգացունեն բոլոր Ազգին և միանդամայն հոս ներկայ գտնուող խուռն բազմութեան ժողովրդեան թէ իրենք օրինաւորութիւնը սիրող ու յարգող են, թէ հեռի են իրենցմէ ամեն անձնական նկատմունք, և մի միայն Ազգին օգտին և բարւոյն համար անաչառութեամբ պէտք եղածը պիտի խորհին և 'ի գործ դնեն։ Նոյնպէս կաղաչեմ բոլոր ազնուամիտ ժողովուրդն, որ հոս խռնեալ են այսօր ազգասիրաբար, չմիջամտել բնաւին ժողովոյն վիճաբանութեանցը, ոչ հաճութեան և ոչ տհաճութեան նշան կամ ցոյց մը չընել և հանդարտութիւնը վրդովելու պատճառ չտալ։

Թոյս ունիմ որ բնաւ անպատեհ միջամտութիւն կամ ցոյց մը տեղի չը պիտի ունենայ որով և ես չը պիտի պարտաւորիմ Պատկառելի ժողովոյդ կողմանէ ինձ տրուած իշխանութիւնը անաչառապէս 'ի գործ դնել առեանը գոցելով։ Վերջապէս մեր սիրելի ազգն այսօր պիտի հանդիսանայ ուրիշ ազգաց առջև իրեն խոհեմութեամբը, կենցաղավարութեամբը ու օրինապարութեամբը։ Այնքէ ուրեմն որ այս չքնաղ յատկութեանցը իրաք ապացոյցները տայ այսօր։

Ատենապետ էֆ. Վարչութեան Քաղաքական ժողովոյն կողմէն ալ այսօր հրաժարագիր մը եկած ըլլալը ծանուցանելով կարդաց զայն։

Ահաւասիկ պատճէնը.

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի
եւ Մեծաշուք Երեսփոխան էֆէնտիներ։

Ազգային Վարչութեան Քաղաքական ժողովս Պատկառելի ժողովոյդ ընտրութեամբը պաշտօնի կոչուած օրէն, ըստ պարտաւորութեան իւրում ուղեցոյց ունեցաւ ազգային Սահմանադրութիւնը, զոր արդէն վերաքննեալ քանի մը մասանց համաձայն ճշդիւ գործադրել ձեռնարկեց, եւ պարտաւոր կը մնամք մեր խղճին առջեւ եթէ մեր փորձառութեամբը չը վերջանք հաստատել եւ յայտարարել որ Կեդրոնական Վարչութեան կողմէ եթէ կամք չը պակսի, Սահմանադրութիւնը կրնայ ճշդիւ գործադրուիլ, եւ ազգային գործոց բարւոք մնացորդութեանը նպաստել։

Բայց միւս կողմանէ Վարչութիւնս իւր այս օրինական ընթացքին դէմ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր ընդդիմութիւնը կը տեսնէր, եւ մինչդեռ Վարչութիւնս յարաժամ կը յիշեցնէր թէ Սահմանադրութեան համաձայն պարտաւոր է վարել իւր պաշտօնը. Նորին Սրբազնութիւնը կը յայտարարէր թէ՝ ըստ ամենայնի Սահմանադրութեան հետեւիլ անկարելի է, բայց այս անկարելութեան փաստ չկար, եւ չեղաւ այնպիսի նիստ մը, յորում Վարչութիւնը Սահմանադրութեան մէկ յօդուածն իր տալիք որոշմանը արգելք եղած տեսնէր։ Իսկ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն իր համոզման մէջ անդրդուելի կը կենար, եւ անձուկ վայրկեաններու մէջ Վարչութեան կը յայտարարէր թէ Պատրիարքը Վարչութեան որոշումներն ուղղել կը գործադրէ, թէ Պատրիարքը պարտական չէ վարչական ամեն գործ Վարչութեան իմացնել, թէ ինքն իր նախորդաց պէս չկրնար որոշեալ չափով դրամ առնուլ, եւն։

Երբ այս խօսքերը հետզհետէ իրողութեան կերպարանք առին, եւ երբ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին ինքնին անօրինած գործերը նկատողութեան առնելու կարգն եկաւ, եւ Վարչութեան որոշմանց՝ որ Սահմանադրութեան հակառակ չեն, գործադրութիւնն ընել Ս. Պատրիարքին պարտաւորութիւնն ըլլալը բացարձակապէս յայտարարուեցաւ, այն ատեն իրերը կերպարանափոխ եղան։ Նորին Սրբազնութիւնն ոչ եւս իւր առաջին դիրքն ունէր, մինչեւ Վարչութեան անդամներ եւ Վարչութիւնն իսկ իրենց պաշտօնական դրից մէջ անարգուելու փորձեր եղան. հետեւաբար այլ եւս մեր պաշտօնավարութիւնն անկարելի եղաւ։

Ուստի կը պարտաւորինք հրաժարիլ 'մեր պաշտօնէն, խոստանալով մեր համարատուութեան տեղեկագիրը քիչ օրէն ներկայացնել Ազգային ժողովոյդ ուշադրութեանը եւ քննութեանը, եւ այսուհետեւ պատասխանատուութենէ ինքզինքնիս ազատ համարելով, սոյն հրաժարագիրս կը ներկայացնենք Պատկառելի ժողովոյդ։

3 Օգոստոս 1873

Ազգային Վարչութեան հրաժարեալ
Քաղ. ժողովոյ անդամքս

Սենեքերիմ Մանուկեան. Բարսեղ Հալաճեան
Յովհաննէս Ճիլաճեան. Քրիստոդորոս Ղազարոսեան
Ալիքսան Խորասանճեան. Ս. Պ. Պ. Փափազեան

Նոյնպէս Քաղաքական ժողովոյ Անդամ Կրճիկեան էֆ.ի կողմէն անցեալ շաբթու Սրբազան Պատրիարքին ուղարկուած և այսօր Ընդհանուր ժողովոյ դիւանին յանձնուած մասնաւոր հրաժարագիրն ալ կարդաց, որոյ պատճէնն ահաւասիկ.

Ամենապատիւ Սրբազան Հայր

Ժամանակէ մը 'ի վեր Ազգային Վարչութեան Քաղաքական ժողովոյ մէջ ցաւալի անհամաձայնութիւն մը կը տիրէ. թէեւ սոյն անհամաձայնութեան բարձման եւ անոր պատճառաց խաղաղ անհետանալուն կը փափաքէի, սակայն իմ այս փափաքս 'ի դերեւ ելաւ, եւ երթալով աւելի անհամաձայն վիճակի մը ենթարկեցաւ ժողովս։

Այս տեսնելով չէի կրնար չյիշել՝ թէ Ազգային Պատկառելի Ընդհանուր ժողովոյ առջեւ պատասխանատուութեան անխուսափելի պարտաւորութիւն մը ունէի, որ իմ վրայ վստահութիւն յայտնելով՝ Քաղաքական ժողովոյ անդամակցութեան փափուկ պաշտօնին կոչելու պատիւն բրած էր ինձ, նոյնպէս եւ չէի կրնար չյիշել թէ սոյն պաշտօնին պարտեաց կատարման մասին՝ Ազգին առջեւ բարոյական մեծ պատասխանատուութիւն մ'ալ կը կրէի, որք՝ արդ՝ արեւ, խղճիս եւ զգացմանցս վրայ ծանրացած, զիս անկարող կընեն այլ եւս այս պաշտօնը չարունակել։

Ուստի, ինդրեմ Սրբազան Հա՛յր, ներկայ հրաժարագիրս Պատկառելի Ընդհանուր ժողովոյ առաջին նիստին ներկայացնել բարեհաճեցէ՛ք, անոր յաջորդ նստին մէջ։

27 Յուլիս 1873

Մնամ բարձր Սրբազնութեան ձերում
ամենախոնարհ ծառայ
Յովհաննէս Կրճիկեան

Յետոյ Ատենապետ էֆ. յանուն ժողովոյն հրաւիրեց զՍրբազան Պատրիարքն իւր հրաժարման պատճառները բացատրել։ Եւ Սրբազան Պատրիարքը հետեւեալ բացատրութեան թուղթը կարդաց յատենի ժողովոյն։

Երեսփոխանք Հայոց

Այսօր իմ արձակման օրն է, կաղաչեմ որ թոյլ տաք այս տաճարին մէջ, Հայոց Երեսփոխանութեան առաջ, մի քանի խօսք խօսիմ և արձակում խնդրեմ այս ատենէն՝ որ 1869 թուոյն սեպտեմբեր 4ին իւր քուէի ազատ ընտրութեամբ զիս կոչեց և Ցարօնէն վարեց մինչև ցայս վայր։ Նոյն տարւոյ Նոյեմբեր ամսոյ սկիզբը, Պօլսոյ Մայր Եկեղեցւոյ բեմին վրայ մեր գահակալութեան հանդէսն կատարուեցաւ, չգիտեմ կը յիշէք այն իմ Ծաղկազարդի օրը, ես խօսք տուի Ձեզ և ուխտեցի այսպէս։ "Երեսփոխանք և ժողովուրդք Հայոց, դուք զիս բաղում դժուարութեամբ յայս գահ բարձրացուցիք, կուխտեմ ահա՛ յանդիման՝ Ձեր, որ առանց աշխատութեան ես ինքնին կիջնամ այս գահէն։

Յարգանօք համբուրելով համայն Ազգի կնիքը կրող Ձեր վճռագիրը, զի օրինօք կապեցայ, կը փափաքիմ դարձեալ օրինօք արձակիլ։ Միայն սա կաղաչեմ, վասն փառաց Եկեղեցւոյ և Հայոց ազգին, խաղաղութեամբ կոչեցիք զիս, խաղաղութեամբ թողէք որ երթամ։

Այո՛, մեծ ակնկալութեամբ ընտրեցիք զիս ու բերիք, գիտեմ, դժուարին է դիւրութեամբ թողուլ։ Ի՞նչ էր արդեօք Ձեր և հանուր Թուրքիոյ Հայոց ակնկալութիւնը։ Ահաւասիկ։ Կակնկալէիք որ Թրիմեան Հայաստանեայց Եկեղեցւոյ փառք կը յաւելուր, կը յուսայիք թէ նա Եկեղեցւոյ պաշտօնէից աղաւաղ դրութիւնը կը վերանորոգէր, կը հաւատայիք որ նա անդադար քարոզելով, դպրոց, դաստիարակութիւն, լոյս և ազգային յառաջադիմութեան կառք կը վարէր և դէպ 'ի իւր նպատակ կը տանէր։ Թող այս, մեծ ակնկալութիւն մի եւս այն էր, թէ Թրիմեան իբրև Սահմանադրաւոր Պատրիարք, նա ինքն ձեռնհաս պիտի լինի շուտ և արագապէս իւր արծուի թեւերով Սահմանադրութիւն բառնալ և տանիլ սիրել Հայոց աշխարհին վրայ, քաղաքացի և շինական, գիտուն և ռամիկ ուհատարակ միահամուռ մկրտել, լուսաւորել և նոր Սահմանադրական ժողովուրդ կազմել։ Առաւել քան զայսոսիկ ամենամեծ ակնկալութիւն գաւառացի ժողովրդոց այն էր, թէ Թրիմեան Պատրիարք եղաւ, ուրեմն աւետիս, պէտք է որ ազատուինք հարստահարութեան ամեն ճնշումներէ։

Զարմանքն այս է, որ ես էլ ճիշդ ձեզ նման կը հաւատայի, թէ կարող եմ այդ մեծամեծ հրաշքները գործել և ար-

դիւնաւորութեամբ պատկել այդ նախաթուեալ մեծամեծ ակնկալութիւնք։ Սորա համար իմ սրտի զեղուն զգացմամբ և անկշիռ երեւակայութեամբ չափեցի թէ արդեօք Տարօն Թողում, Վարագ Թողում, իմ այն փոքրիկ ագարակները, յորս կաշխատէի և կը մխիթարուէի գոնէ դուշնաքեայ վաստակօք, ու երթամ մեծն Բիւզանդիոն Հայոց Պատրիարք լինիմ, որոնց կարենամ ակէ աւելի ազգին շահաբեր լինիլ։ Անկեղծաբար խոստովանելով ես կը ճանաչէի զիս, թէ Պատրիարքութեան բարձր Աթոռին վայելուչ յատկութիւններ չունէի, ոչ իմաստութեամբ, ոչ ուսումնականութեան հանճարով, ոչ քաղաքագիտութեամբ, և ոչ քանի մի լեզուաց հմտութեամբ։ Այս չափ տկարութեամբ հանդերձ, քաւ, փառասիրութեան տենչանք մղեց զիս յայս պաշտօն, ո՛չ, այլ միայն Ազգին սէր և հայրենեաց օգնելու եռանդն։ Ինքնին այս միայն կը մտաբերէի, թէ պահ մի երթամ Պատրիարքութեան դահին վերայ կենամ, թերեւս այդ իշխանութեան կեդրոնէն ձեռնհաս լինիմ դարման մի գտնել ու հայթայթել բազմակարօտ Ազգին։ Իմ այս ապիկարութեանս չափը նոյն իսկ Երեսփոխանական Ժողովդ քաջ իսկ գիտէր, Խրիմեան իւր աչքէն անծանօթ չէր, բայց չ'գիտեմ թէ ի՞նչ նպատակաւ, գուցէ խաղաղութեան համար, պահ մի ափշեցաւ ու մոռացաւ Սահմանադրութեան օրինադրած անժխտելի յատկութիւնները և ընտրեց մարդ մի, որուն կեանքն առաւել կը սիրէր լեռ, դաշտ և վանական զբաղմունք։ Բայց ասկէ աւելի ի՞նչ պիտի ընէիր, Երեսփոխանութիւն Հայոց, նախահոգակ հեռատեսութեամբ չ'ցանեցիր, որպէս զի ժամանակին հնձէիր. առանց շուարման Վանայ փոքրիկ ագարակի մը մէջ ինքնաբոյս Խրիմեան մը գտար, վա՜ղ, ըսիր ու ընտրեցիր, այդ ինքնաբոյս ծառերուն պտուղ այս չափէ, իրաւունք չ'ունիս տրտունջ բառնալու։

Երեսփոխանութիւնը զիս անտես կարդեց, անշուշտ իւր իրաւունքն է համար պահանջել. տակաւին պայմանաժամ կար, բայց ես կանխեցի իմ համարս տալ, մտածելով որ եթէ Թողում այլ ևս ժամանակ անցնի, առաւել ևս պիտի ծանրանան յիմ վրայ համարատուութեան պարտքը։ Մինչև Նոյեմբեր ամսոյ սկիզբը մեր ընտրութեան չորրորդ տարին կը լրանայ, և ես կամաչեմ թէ այս շրջանին մէջ որ գործեր յառաջ բերեմ ու թուեմ, որ ինձ և Սահմանադիր Վարչութեան գոնէ փոքր ի շատէ պարծանք լինին և Ազգը յոյսերով ոգևորի։

Վաթսուն–երեք–երրորդ անգամ Երեսփոխանական Ժողովդ նախագահեցի, ի սկզբան՝ երբ առաջին նիստն կազմեցաւ, առեան բացուեցաւ, ինչ էր նախագաս և կարևոր խնդիրն «ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ։ Ո՛հ, չորս տարուան շրջանի մէջ, այս ամենակարևոր խնդիրը խնդրոց կարգին մէջ անլուծանելի մնաց. Ցանձնաժողովի նախապատրաստեալ ծրագիրը մերժուեցաւ, որպէս զի լաւագոյն ևս ծրագրուէր։ Քանի մի ամիս յառաջ նոր Վերաքննիչ Ցանձնաժողով մի ևս ընտրեց Երեսփոխանութիւնդ, այն ժողովը, ինչպէս որ կը լսեմ, դեռ և ոչ յօդուած մի վերաքննեց։ Այս խնդիրն այսպէս անկատար կայ ու կը մնայ։ Երեսփոխանութիւնդ այլ ևս ի՞նչ խնդիր լուծեց, Սայ խնդիրը լուծեց, այո՛ այս խնդիրը լուծեց մեծ հեռատեսութեամբ։ Հարստահարութեան խնդիրն յուզեց, այո՛ այս խնդիրը մահու և կենաց խնդիր էր տառապեալ Ազգի մի համար, զոր երկիցս Բ. Դրան յանձնելով շնորհ և գթութիւն հայցեցինք յանուն Ազգին, և դեռ կսպասեմ այցելութեան։ Կան ուրիշ քանի մի Ընդհանուր Ժողովոյ առեանն եղած խնդիրներ, զոր օրինակ Ատենական կանոնադրութեան խնդիր, կեդրոնացման և Ապա–կեդրոնացման խնդիր. Կաթուղիկոսական և Պատրիարքական յարաբերութեանց խնդիր. Վեհ. Կաթուղիկոսի կոնդակի խնդիր. Աղթամարայ Կաթուղիկոսութեան խնդիր։

Այն խնդիրներէն թէ ո՞րն կարևոր էր և ո՞րն անկարևոր, ո՞րն լուծելաւ և ո՞րն անլոյծ մնաց, ձեզ կը թողում իմաստասիրել, թէ արդեօք շահեցաւ, թէ ի՛ զո՛ւր վաստակեցաւ Երեսփոխանական ատեան։

Թողով Երեսփոխանական Ժողովոյ գործոց արդիւնքը, պէտք է հարևանցի կերպով նկատենք չորս տարուան շրջանի մէջ գտնուած Կրօնական և Քաղաքական Ժողովոց, Տեսուչ խորհրդոց. Հոգաբարձութեանց, մէկ խօսքով հայոյն Ազգային Վարչութեանց գործքերը և որոշումները։ Դիւանական վիճակագրութենէն կրնաք տեղեկանալ, թէ այդ խնդիրները և գործքերը ամենամեծ մասամբ անհատական և մասնաւոր են։ Այսպիսի անթիւ անհատնում խնդիրներով միշտ զբաղեցաւ Ազգային Վարչութիւնն իւր ամէն ճիւղերով, բայց ի Ընդհանուր Ժողովէն։ Այսչափով գոհ եղաւ և երբէք չ'խելամտեց թէ՝ Սահմանադիր օրինաց առաջ իւր մեծ պարտքն էր նկատել Ազգին կեանքը, Ազգին վիճակը, ընդհանուր խնդիրներ յառաջ բերել, այն խնդիրներու համար է խօսքս, որ Ազգին կեանքը (վերանորոգել կերաշխաւորէին։ Ստոյգ խօսելով, ես ըստ աչս դատել չեմ ուզեր, և չեմ կրնար մեղադրել Կրօնական և Քաղաքական Ժողովները թէ Ազգին ընդհանուր խնդրոց համար, նոքա ևս ինձի պէս չեն խորհիր և չեն մտաբերեր։ Այո՛, թերևս առաւել քան զիս կզգան ու կը խորհին Ազգին պէտքերը, բայց երբ, որ ժամանակին մէջ ձեռընհաս են խորհելու. այդ ժամանակը ինձ համար անծանօթ է. զի խուռն և բազմադիմի մասնական խնդիրներ յաւիշտակէր են զանի, դիւանին վրայ խըռնած թուղթերը, խորհրդարանի՞ դրան վրայ կեցած ճչող ժողովուրդը քեզ երբ ժամանակ կուտան որ դուն օր մի, պահ մի Ազգին ընդհանուր և ներքին խնդրոց վրայ խորհիս, ինչպէս են

Ա. Ազգային Վարչութիւնն իրապէս կեդրոնական և հանրային դրութեան վերածել, և կ. Պոլսոյ համար առանձին տեղական վարչութիւն մը կազմել։

Բ. Ազգային պաշտօնէութեան՝ բարեխնամ կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւնն օգտակար դրութեան և աւելի օրինաւորութեան վերածել։

Գ. Սահմանադրութեան ընտրողական օգտակար սկզբունքը չարաչար չ'գործածուելու համար՝ ապահով և կարևոր եղանակ որոշել։

Դ. Ազգային տուրքը կանոնաւորել և ընդհանրացնել։

Ե. Ազգային պաշտօնէութեան համարատուութիւնն և համարառութիւնը պարտաւորիչ եղանակի մէջ դնել։

Զ. Եկեղեցականաց ներկայ անկերպարան վիճակին և ընթացքը կերպաւորել և կանոնաւորել, համաձայն (Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ նախնի ոգւոյն օրինաց և ուղղութեան։)

Է. Առաջնորդական պաշտօնավարութեան և համարատուութեան օրինաւոր և անխուսափելի եղանակ սահմանել։

Ը. Ազգային վանօրէից և եկեղեցեաց կալուածներն ու եկամուտներն ապահովել և Ազգի բարոյական օգտին ծառայեցընել։

Թ. Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութիւնն հաստատուն պահելու և Քրիստոնէական ճշմարիտ գիտութեան լոյսը Ազգին մէջ ծաւալելու համար ամենակարևոր միջոցներ ձեռք առնուլ, և ջա-

նալ Ազգին մէջ պատահած կրօնափոխութեան առաջքն առնուլ։

Ժ. Ազգին մէջ ուսումն և գիտութիւն ծաւալելու համար նոր և ազգումիջոցներ ձեռք առնուլ։

ԺԱ. Ազգային գաւառական թեան համար դրամագլուխ հաստատել։

ԺԲ. Նախակրթական ուսումն ընդհանրացնելու դիւրութիւններ գտնել, և քանի մի կեդրոնական բարձրագոյն ուսումնարաններ բանալ։

ԺԳ. Հայոց ազգային ընտանեկան կեանքն, այն է՝ ամուսնական և բարոյական կապերը ամրապնդել, զեղծումներն բառնալ, պանդխտութեան առաջքն առնուլ, և Ազգը մի հանրական ընտանիք կազմելու դրութեան վերածել։ Ներքին և արտաքին հարստահարութիւններն բառնալու համար Բարեխնամ Տէրութենէն աւելի զօրաւոր միջոցներ խնդրել, գաղթականութիւնն արգելուլ, ազգային անհատական իրաւունքներն պաշտպանել, որով և Ազգի ամբողջութիւնն ապահովել։

Վարչական ընթացքի նկատմամբ սոյն համառօտ դիտողութիւններս յայտնելէն յետոյ՝ գիտեմ անհամբեր կ'սպասէ Երեսփոխանական ժողովդ, որպէս զի փութամ յայտնել այն կարևոր պատճառներն, որք անհրաժեշտ կերպով ստիպեցին զիս ինքնակամ յօժարութեամբ հրաժարիլ։ Հեռատեսութեամբ նկատելով որ Ազգին շահ, Եկեղեցւոյ շահ, ժամանակի ծանր ծանր պարագաներ, այսպիսի զոհ մի կը պահանջեն յինէն. խաղաղ նահապետին չափ պատրաստ եմ առ այս, միայն կ'աղաչեմ որ Երեսփոխանական ժողովդ իւր վճիռը պատրաստէ։

Իմ հրաժարելուս առաջին պատճառը ձանձրութիւն և յուսահատութիւնն է. պարծելու համար եկայ, և բան մի չի գործեցի, մէկ երկու տարի իբրև անփորձ հազիւ թէ փոքր 'ի շատէ խելամուտ եղայ ազգային գործոց և ընթացքիս, Ամօթ չ'եմ համարիր այսպէս խոստովանիլ. վասն զի Երբոպոյ ամենէն իմաստուն կարծուած անձն իսկ տակաւին կարօտ է փորձառութեան և գործակից աջակցութեան։ Սոյն փորձառութեանս մէջ ստուգապէս վերահասու եղայ, և կը վկայեմ առաջի Ազգին և Երեսփոխանութեանդ որ Սահմանադրութեան տրամադրած քանի մի ժողովներն երբէք բաւական չ'են Հայոց Ազգի պէտքերը հոգալ։ Մի կրօնական ժողով ունիմք, որուն պարտքն էր ըստ Եկեղեցւոյ օրէնաց և Սահմանադրութեան Եկեղեցին բարեզարդել, արժանաւոր Եկեղեցականաց դասը բազմապատկել. բարեպաշտութիւն և կրօնի զգացումն ժողովրդոց սրտի մէջ կենդանի պահել։ Այս պարտքերը կատարելու յաջողեցա՞ արդեօք, եթէ հարցնէք, պիտի պատասխանեմ. "Ոչ. վասն զի ժամանակ չ'ունեցայ"։ Թող թէ Գաւառական Եկեղեցեաց համար հոգալ և բարեկարգութեան օրէնքներ տալ, նոյն իսկ Մայրաքաղաքիս Երեսուն և երկու Եկեղեցեաց և այսքան Քահանայից պէտք եղած բարեկարգութիւններն հաստատելու անձեռնհաս եղած է միշտ. և այս դրութեամբ երթալով ոչ մի ժամանակ ձեռնհաս պիտի ըլլայ։ Սահմանադրութիւնն անվարձ և անթոշակ քաղաքական ժողով մը տուած է Ազգին համար, որուն պարտքն է Թուրքիոյ երեք միլիոնի մօտ ժողովրդոց պէտքերը հոգալ, շաբաթը մի անգամ խորհուրդ կազմելով և այն հազիւ երեք ժամու տեւողութեամբ։ Մեր քաղաքական ժողովոյ վիճակին անձամբ և ներկայութեամբ նկատեցի. տեսայ որ այս ժողովը միշտ անձեռնհաս եղած է նոյն իսկ դատական և այլ մասնաւոր խնդիրները լուծել, թող թէ Ազգին ընդհանուր նեղքին և կենցաղական խնդիրները յառաջ բերել և խորհիլ։ Կ'աղաչեմ, ծանրաբեռնած է այդ ժողովը, վերցուցէք իւր թիկանց վրայէն բոլոր Գաւառական խնդիրները, տեսցուք թէ գարկարող է նոյն իսկ Մայրաքաղաքիս թաղային գործերը կարգադրել, և ահա այդ գործերուն երեսէն է, որ երէկ Հայոց Պատրիարքարանը կուլայ տապալեզ դարձաւ 'ի ցաւ ամէն ողջամիտ ազգասիրաց։

Այսպէս է նաև միւս Տեսուչ խորհրդոց վիճակն, որոց գործերու տապալրէզ միայն Մայրաքաղաքիս շրջանակն եղած է. և միթէ 'ի Պրուսա և 'ի Ռօսսիա երթալու ժամանակ ունի՞ն։

Դիտէ Երեսփոխանութիւնդ, որ Սահմանադրութիւնն աշխատութեանց բաժանման սկզբունքն ընդունած է. ուստի վարչական ընթացքից գոնէ ըստ մասին դիւրութիւն մի տալու համար. առկէ իրը տարի մը յառաջ այս դժուարին իրաց պարագաները մի առ մի համոզական բանիւ ու արդարացի փաստերով քաղաքական ժողովոյ առնին ներկայացուցի, խնդրելով որ երկու Մասնաժողովներ յատկանան. Ժողով մի քննիչ գործոց, ժողով մի գանգատների գործոց։ Մեր այս պարզ և օրինաւոր խնդիրն այնքան թիւր կարծիքներու ենթակայ եղաւ քաղաքական ժողովին առաջ, որ աւելորդ և անկարևոր դատեց զայն ուշադրութեան առնուլ, և ես խոհականութիւն համարեցի չ'պնդել մինչև ժամանակ անցնի և փոփոխութիւնը զիրենք համոզէ։

Այն օրէն և այս խնդրէն ծնաւ անհամաձայնութիւն մեր և քաղաքական ժողովին մէջ, և երթալով մեծցաւ այլ և այլ առիթներով։ Զարմանալ պէտք է, թէ այս ամենազարգ խնդրէն կարելի՞ է յուսալ նպատակ մի հանել և մինչև իսկ ասել թէ՝ հակառահմանադրական է այս դրութիւն և այլն։

Երբ տեսայ, որ քաղաքական ժողովն այս խնդրոյն շուրջէն միշտ կը խրտչի, և այլևս անկարելի է ընդունել տալ, խորհեցայ հիմնական կերպով այդ խնդրոյն լուծումն Ընդհանուր ժողովին բերել վերաքննիչ Յանձնաժողովին ձեռքով։

Ուստի իրը երկու ամիս յառաջ, երբ ինքն պաշտօնական դրով մեր դիտողութիւնը խնդրեր էր Սահմանադրութեան յօդուածոց մասին, յայնժամ պատեհ առիթ համարելով այս ամենակարևոր խնդիրն, իբրև առաջին դիտողութիւն, գրեցի և անձամբ մատուցի Յանձնաժողովին, և շատ համոզիչ փաստերով խօսեցայ, բացատրեցի խնդրոյ բուն ոգին և օգուտ, որ թէ մանուկ լսէր, կը համոզուէր.

Բայց ցաւօք սրտի կը յայտնեմ յաւէնի Ազգային ժողովոյս, թէ ինչպէս քաղաքական ժողովը, նոյնպէս և վերաքննիչ Յանձնաժողովը նուազ կարևորութիւն տալով մեր խնդրոյն զայն մասնաւոր տեղեկագրով Ընդհանուր ժողովոյս բերել հարկ չէ համարած, թողլով որ Սահմանադրութիւնն ամբողջ վերաքննուելէն յետոյ Ընդհանուր ժողովոյ դայ։ Ասա՜ ահա՜ իմ համբերութիւնս հատաւ. զի ես չգիտեմ ու չեմ հաւատար թէ այդ վերաքննութեան աւարտում՞ որ թուականին է։ Այս խնդրոյն ոգին լաւ ըմբռնելու համար պէտք է կարդամ Յանձնաժողովին տուած առաջարկութեանս ճիշդ պատճէնը, և ապա դառնամ ու բացատրեմ երկրորդ պատճառը, որ մեր հրաժարման փոքր առիթ չէ։

Վսեմաշուք Ատենապետ
Ազգային Սահմանադրութեան
վերաքննիչ Յանձնաժողովոյն

Քանի մի օր յառաջ յայտագիր մի ընդունեցի վերաքննիչ Յանձնաժողովոյդ Ատենէն, որով մեր կարծիքն ու դիտողութիւնները կը խնդրէք Սահմանադրութեան մէջ պարունակեալ վերաքննելի յօդուածոց վրայ։

Առ այս ինչպէս բերանացի Ձեր Ատենին խօսեցայ, առ այժմ միայն խիստ հակիրճ բանիւք առաջին դիտողութիւնս կը յայտնեմ։

Ազգային Վարչական կազմութիւնը

(բաց յընդհանուր ժողովէն) միշտ անբաւական և անձեռնհաս է համայն Թուրքիոյ Հայոց Ազգին խնդիրներն ըստ օրինի և ընթացիկ եղանակաւ լուծելու, թէ օրուան պատահական խնդիրները, թէ՛ ներքին և կենսական գործերը, որք անհատական մասնաւոր անձի մը կամ առանձին գաւառի մը չեն վերաբերիր, այլ բովանդակ Ազգին։ Զի Ազգին շահ և յառաջադիմութիւնն այս խնդրոց մէջն է։ Այս խնդիրներն իսպառ բարձի թողի եղած են, միայն բերանով կը խօսուին, լրագիրը կը քարոզեն, բայց առանց արդեանց և առանց ձեռնարկութեան մնացած են մինչև ցայսօր, և որոնք բուն ներքին պատճառն է վարչական ժողովոց սակաւութիւնը և ժամանակի անձկութեան պայմանը։

Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիոյ Հայոց իւր առանին խնդիրները լուծելու համար միայն մի քաղաքական ժողով, մի կրօնական ժողով և իրենց քանի մը մասնաւոր ճիւղերը հաստատած է։ Այս ժողովները շաբաթը միայն երեք ժամ հաղիւ կարող են ժողովիլ ժամ ուրթին և շատ անգամ անցած՝ առեանը բանալ, խնդրոց կարգը յառաջ բերել և լուծել։

Եթէ կայ կէտ մի, որ Սահմանադրութեան խմբագիր ժողովոյ մտքէն վրիպած է, ահա այս կէտն է. ինձ այնպէս կը թուի որ այդ օրէնքը խմբագրող ժողովը թերևս նկատելով որ Սահմանադրութենէն յառաջ միայն Գերագոյն և Հոգևորական երկու ժողովները կարող եղեր են Ազգը կառավարել, և նորա խնդիրները լուծել, ուստի Գերագոյն ժողովին տեղը՝ քաղաքական ժողով և Հոգևորականին տեղ՝ կրօնական ժողովը դաւական և շատ համարեր է։ Արդեօք չ'են մտածեր և չ'են կրցեր նախատեսել։ Եթէ Սահմանադրութենէն առաջ Հայոց համար տարեկան հազար խնդիր կար, Սահմանադրութենէն յետոյ երկու հազարի հասաւ, զի խիստ բնական է, երբ ժողովուրդը քուէի իրաւունք ստացաւ, երբ Ազգին մէջ պարտուց և իրաւանց սկզբունքն օր ըստ օրէ յարգուի, անշուշտ բազմապատիկ խնդիրներ կը ծընանին, և այս խնդիրներէն շատ անգամ վէճ և կռիւ, որու հեռևանքն եղած է միշտ չարաչար զբաղմունք վարչական ժողովոց։ Թող այս, ոչ միայն Սահմանադրութիւնը Հայոց խնդիրներուն} Թիւն տասներկու տարուան միջոց բազմապատիկ առաւելցուց, այլև ժամանակը, յառաջադիմութիւնը, ամեն օր, ամեն ժամ, և նոյն իսկ վայրկեաններուն մէջ խնդիրներ կը ծնին։ Այս ոչ միայն մարդը՝ այլ և Աւետարանին վկայութիւնը կ'ուսուցէ թէ՝ վաղեան օր իրեն համար խնդիր ունի, «ոչ դիտես թէ վաղիւն զի՞նչ ծնանելոց է»։

Սահմանադրութիւն գծողները ասկէց դուրս ուրիշ վրիպակ մի ևս ունին, մասնաւոր խնդիրները՝ ընդհանուր խնդրոց հետ չփոթելն։ զոր օրինակ՝ բուն Մայրաքաղաքիս տեղական գործերը գաւառային և ընդհանուր խնդրոց հետ խառներ են։

Փոքառու ճշմարտութեամբ վերաբերեալ լինելով կը վկայեմ թէ Սահմանադրութեան հաստատած քանի մ'անձուկ ժողովները բաւական չ'են իսկ ներկայ դրութեամբ Մայրաքաղաքիս մէջ գտնուած բնիկ բնակչաց գործերը կարգադրել։ Թող թէ հանուր գաւառականաց։ Ցուցադրէս խօսելով որ Պոլսոյ համարեա թէ հարիւր հազար Հայ բնակչաց խնդիրները կը հաւասարին երկու միլիոն գաւառացի Հայոց խնդիրներուն, և կը թողում, չ'եմ յիշեր թէ ինչպէս շատ անգամ տեղական խնդիրները նախապատուութեամբ և զօրութեամբ կը նուաճեն գաւառայնոց խնդիրները։ Այս շփոթութիւնն և այս ընթացքը, մեծ և

ահագին դրկանքներ պատճառած է երկու մասին ևս, թէ՛ մայրաքաղաքիս Հայոց և թէ՛ գաւառականաց, և զարմանալին այն է որ այս դրկանաց վրայ երկուման ևս անտարբեր մնալով չ'են խելամտեր և գտնել իրաւացի բողոքներ բառնալ։

Ուստի այս խնդրոյն վերաբերեալ յարակից պատճառները որ շատ են, զոյն յառեն ժողովոյդ բերանացի բացատրելով, ներկայ խնդրոյս համար այս եզրակացութիւն կը հանեմք, կամ պէտք է տեղական և գաւառական խնդիրներն իսպառ իրարմէ անջատել և Պոլիս իրբև կեդրոնական գաւառ մի նկատելով Սահմանադրութեան տրամադրած ժողովները հաստատել Նախագահ պաշտօնէի մը տակ, բուն տեղական գործոց և խնդրոց համար, և կամ նոր պաշտօնէութիւն մի հաստատել, որ շաբաթ մինչև ց'գլուխ շարունակ նիստեր ընելով, ամենօրեայ խնդիրները լիազօր իշխանութեամբ լուծէ։ բայց դարձեալ ազգին կենսական և ընդհանուր խնդրոց համար առանձին ժողով մի պէտք է, որ գոնէ շաբաթը մի անգամ իւր նիստերը շարունակելով Ազգային յառաջադիմութեան ճանապարհները հորդէ ու բանայ, որ շատ և ահագին խոչընդոտներ ունին։

Ահա, այս է այժմ մեր ամենակարևոր խնդիրը, զոր այսօր ժողովոյդ ուշադրութեան կը յանձնեմ, և այնչափ վերահաս ծանրացած և անհրաժեշտ խնդիր մի է Ազգին համար, զոր պէտք է ժամ մի յառաջ լուծել, զի Ազգին շահն այս կը պահանջէ։ Եթէ տակաւին ազգային վարչական ժողովոյ այս ընթացքը շարունակուի, ոչինչ յոյս չ'կայ Սահմանադրութենէն, և հետևապէս մեր յուսացած յառաջադիմութիւնը ձեռք չ'բերուիր, և տակաւին հեռու կը մնայ Հայոց ժողովրդէն, ոչ գաւառացին իւր մեծամեծ խնդրոց լուծումն պիտի տեսնայ և ոչ մայրաքաղաքացին իւր անուան և տեղւոյն պահանջած յառաջադիմութեան նորանոր արգասիք պիտի կարենայ ցոյց տալ աշխարհի առաջ թէ՝ ինքն Եւրոպիոյ ազգաց դրացի է և իւր պարտքն է քան զամեն գաւառացիս յառաջադիմութեան օրինակ հանդիսանալ։ Ո՞րչափ ցաւալի է թաղային կռիւներով զբաղիլ։ այդ ընչին խնդիրներով միշտ Պատրիարքարանի ժողովները ճնշել, ոչ ժամ, ոչ ժամանակ թողուլ գաւառական խնդրոց։

Այս ապարդիւն ընթացքը դրկանք է և ոչ պարծանք մայրաքաղաքացի ազգայնոց, զի ինքն է նախածնող մայր Ազգային Սահմանադրութեան, իւր պարտքն է գաւառացւոց համար անխնայ զոհելդրամ և ժամանակ, վասն զի համայն Թուրքիոյ գաւառացի Հայերէն իրենք են միայն ուսմամբ և հարստութեամբ ձեռնհաս և ազատ այն ամեն հարստահարութեանց ազգանեներէն, զորս կը կրեն անճարակ ու խեղճ գաւառացիք։ լոյս, բարեկարգութիւն, յառաջադիմութիւն և ազատութիւն միշտ Պոլսոյ կեդրոնէն ըսպասելով։

Շատ ապատեցին, աչքերնին հալեցաւ, յուսահատութիւնը մօտալուտ է, պէտք է ուշադրութիւն տալ գաւառական խնդրոց, և որոնք միայնակ միջոցն է գործոց ու խնդրոց բաշխումն և վարչական մեքենային ամենօրեայ շարժումն։

Ազգիս յառաջադիմութեան ցանկացող

11 Յուլիս 1873 — Գրագրութիւն
Ի Պատրիարքարանի Հայոց — Ս. Պորտիրի
Կ. Պոլիս

Յիշեցնենք, մի մասնաւոր երեսփոխանք Հայոց, այն օր, երբ Սահմանադրութեան համար յինէն ուխտ պահանջեցիք. ես այն օր հեռատեսութեամբ նկատեցի, որ անհնար է մեծն Մոսկովի չափ այդ օրինաց տառ ամենաճշտութեամբ պահել այնչափ, որ կիրակի օր ցրտահարութենէն սոսկալի խռիւ ժողովող պտառը

քարկոծել տալ. և քուէարկութեան մէջ չփոթութիւն հանող անձինք չորս տարի քուէի իրաւունքէն զրկեալ հրատարակել, ուստի բաւ և շատ համարեցի ուխտել միմիայն Սահմանադրութեան ոգւոյն և անփոփոխելի սկզբանց վրայ. բայց ներկայ ֆեազաքական ժողովոյ կազմութեան օր Աստեղագիր էֆէնտին չգիտեմ ինչ նկատումով, դիւանական սեղանին վրայ Սահմանադրութեան օրինագիրքը դնելով այսպէս յայտարարեց. "պէտք է Սահմանադրութեան տրամադրած յօդուածները մի առ մի ձշդութեամբ կատարել" Այն օրէն մինչև ց'այսօր այս յայտարարութեամբ վարուեցաւ ժողովը, և ես հնազանդելով յարդեցի իւր ամէն որոշումները և սառաջադրեցի, բայց մերթ ընդ մերթ միայն դիտողութեամբ յայտնեցի խնամով և զգուշութեամբ 'ի գործ դնել այդ օրէնքը. մինչև ժողովուրդն ընտրանայ, մինչև քուէաթուղթ դրել սորվի, մինչև օրինաց ոգին ճանչնայ, ըմբռնէ, սիրէ ու գրկէ։ Երանի թէ Աստենագիր էֆէնտին այդ յայտարարութեան արդիւնքը վայելէր Ազգը. այլ ընդհակառակն օրինաց խստիւ և տառական դրծադրութենէն հետևեցան այնքան աղմկայոյզ խառնութիւնք Պոլսոյ Թաղերուն և գաւառներու մէջ. Թող ապագային վկայ լինի հազար ութ հարիւր եօթանասուն և երեք Յուլիս 31 Հայոց Պատրիարքարանի դժպատեհ դէպքը։ Մի թէ կարելի՞ է ընդդէմ գիտակցութեան մեղանչելով այս խօսքերէն թիւր հետևանք մի հանել և ասել՝ ուրեմն Պատրիարքն իբրև հսկող օրինաց, իւր պարտիքը չ'ճանաչելով Սահմանադրութեան դէմ կը խօսի և նորա տրամադրած օրէնքները ճշդիւ կատարելու փոյթ չունի։ Այս դատողանին դէմ այսօր և յաւիտեան կը բողոքեմ. զի Խրիմեան յառաջ քան ըզ վաթսուն երրորդ թուականն 1820 Ապրիլ 4 անդամին 'ի մօրէ Սահմանադրութենէն յառաջ, սահմանադրական ծնած է և ցորեկ արևուն լուսով յաշխարհ եկեր է. խոստ դժուարին է զանի իրրև հակասահմանադրական ամբաստանել. ես Սահմանադրութիւնը դրկել կուզեմ, բայց չեմ ուզեր զանի այնչափ ճշդել ուսեղմել. մինչև գրկիս մէջ 'մեռնի։ Ես այնպէս կը համարիմ թէ նորա թերթերը վարդի թերթէն աւելի փափուկ են. խարութեամբ մի շօշափէք. պատառ պատառ կը լինի։ Մանաւանդ որչափ սարսուռ կդդամ երբը ասոմիկանութեան ձեռք կը դպի. այսինքն անիսրհուրդ անհեռատես մարդիկ օրինաց դիմահարները դրպելու համար սոսիկանութեան զէնքը յօգնութիւն կը կանչեն. որոյ վախճանը թէ մինչև ո՞ր կեղերի ձեղ կը թողում խելամտել։

Ժամ է արդ որ խօսիմ ու բացատրեմ իմ հրաժարմանս երրորդ պատճառը, այն է Եկեղեցւոյ վիճակ, որ ամենամեծ և կարևորագոյն է այնչափ՝ որչափ Աստուած, իւր Աւետարանս ու Եկեղեցին բարձրախօսհուրդ են։ Ուշ դիք, երեսփոխանք Հայոց, ուշ դիք պաշտօնակից եղբարք իմ, Թուրքիոյ Հայոց Եկեղեցւոյն վրայ պիտի խօսիմ որ խոնարհեր, աղքատացեր և նուաղեր է յոյժ։ Թոյլ տուք որ հազար երեք հարիւր տարի յառաջ մեր Ս. Խորենացւոյ մրմունջ կրկնեմ ատանօր։

"Ողբամ զքեզ Եկեղեցիդ Հայաստանեայց, խրթնացեալ 'ի բարեզարդութենէ բեմին, զրկեալ 'ի քաջ հովուաց և հովուակցաց»։

Գիտէք, երեսփոխանք Հայոց, ես յետին տրուպ և անարժանս այդ Եկեղեցւոյն հսկող հովիւն եմ. Ս. Էջմիածնայ Վեհափառ Հայրապետին կողմէն փոխանորդ կարգեալ. դուք ձեռքս Սահմանադրութիւն տուիք և պահանջեցիք որ ուխտեմ և հաւատարիմ մնամ Սահմանադրութեան։ Եթէ զեղծանիմ, զիս Ձեր քուէով կը դատապարտէք. յառաջ քան զՍահմանադրութիւն Ցիսուս ալ իւր Աւետարան ձեռքս տուաւ։ Մի թէ այդ մեծ և ահաւոր Աստուածամարդն իրաւունք չունի՞ յինէն համար պահանջել. այո՛, առաւելքան զձեզ, ո՛հ, ո՛հ, ո՛հ, ես այդ Աւետարանն ձգեցի և այժմ բաժանարար 'պաշտօնեայ մի եմ Պատրիարքարանի դատարանին մէջ նստած, քանի մի գործակից եղբայրներովս։ Սահմանադրութիւն անշուշտ Եկեղեցւոյ և Աւետարանի պաշտօնեութիւնը չ'մոռնալով իւր 28 տարի յօդուածով իմ գործակից Կրօնական ժողովոյ պաշտօնը այսպէս կը սահմանէ.

"Ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւն. իւր պարտաւորութիւնքն են Ազգին մէջ կրօնական ընդդիմութիւն զարգացնել. Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւն և աւանդութիւնները անխախտ պահել, Եկեղեցեաց և Եկեղեցականաց բարեկարգութեան հսկել, Եկեղեցականաց ներկայ վիճակ լուցնել և ապագայն անդորրելու և ապահովելու միջոցներն ձեռք բերելու հոգ տանիլ, աղգային վարժարանաց երբեմն երբեմն այցելութիւն ընելով Քրիստոնէական վարդապետութեան ուսուցման վրայ հսկողութիւն ընել, արժանաւոր և բանիբուն վարդապետներ և քահանաներ հայցնել և Ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննելով Եկեղեցւոյ օրինաց համեմատ լուծել»։ Խիստ վայելուչ և պատշաճաւոր շարադրած ես այս պարտիքները, դո՛ւ, Օրէնագիր ժողով Հայոց, և ծանր ծանր պարտուց բեռներ բարդեր դիզեր ես իմ և Կրօնական ժողովոյ Թիկանց վրայ. չ'գիտեմ անգամ մի հարցուցիր. համար պահանջեցիր թէ այս պարտիքներէն ո՞րը կատարեցինք և ո՞րը թողուցինք։ Քեզ ցաւօր սրտի գոյժ կուտամ որ այդ յօդուածին վերի ամբողջ պարբերութիւններըՍահմանադրութեան Թղթին վրայ մեռած մնացած են, և միայն վարի պարբերութիւնը այն է "Ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննելով որոշումն կատարել, բայց չէ թէ եկեղեցւոյ օրինաց համեմատ ըստ Սահմանադրութեան, այլ խոշի օրինաց և երբեմն ես յաւանդութենէ կամ 'ի սովորութենէ պահուած պայմաններով։ Ա՜հ, արդար և անաչառ դատաւոր մի լիներ ատա, և ես քեզ հետ դատատանի մանէի, Օրէնագիր ժողով. դու այսչափ մեծամեծ պարտիքներ բաժին հաներ ես ինձ և Կրօնական ժողովոյն, երբէք չէ յիշեցիր թէ այդ պարտիքներու հետ իրաւունքը անբաժանելի կերպով կապուած է. դու միայն պարտիքներ կը սահմանես, իրաւունքները կը մոռնաս, մի դուցէ այդ պարտիքները կատարելու համար եկեղեցւոյ պաշտօնէից մեծ շահերու արդիւնքը միտքդ եկած է, այսինքն մկրտութեան դրամ, պատարագի դրամ, մեռելի դրամ։ Այդ պատուղները մեր սակաւապետ կենաց պարէնն է, մեր կեանք պահող լոկ հացի գինն է. կամ թէ յաւիտենական Երեսկայութեամբ 1800 տարի յառաջ երթալով կարծեցիր որ Աւետարանի արդի պաշտօնեաներն՝ առանց ցոյց, առանց մախաղի և առանց գօտին մէջ պահուած պղնձի կարող են Գոլգոթան մինչև 'ի Տրապիզոն երթալ և կամ Քրիստոսի դարուն և Առաքելոց նման ամէն բան առանց մամոնայի հրաշքով գործել։ Ուստի քանի որ այսչափ պարտեաց դէմ իրաւունք սահմանած չես, այդ պարտիքներու կատարման արդիւնքը կարող չես տեսնալ, որոյ իբրև ապացոյց յառաջ կը բերեմ այս իրողութիւնը, որով ես և իմ Կրօնական ժողովոյ եղբայրներս շատած կեցած եմք։ Երբ Հայաստանի այլ և այլ շատ գաւառներն և վիճակներն հովիւ կուզեն, 'հովիւ չկայ. Տիգրանակերտի կուսակալութեան մեծ վիճակ արժանաւոր հովիւ կուզէ, հովիւ չկայ. Եդեսիոյ վիճակ հովիւ կուզէ, հովիւ չկայ. Խար-

բերդի Ճոխ բազմահայ վիճակին հովիւ պէտք է, ուր բողոքականութիւն յառաջ կերթայ. այդ ժողովուրդը Ս. Գրիգորի գաւթին մէջ պահող հովիւ չկայ։ Արապկիր հովիւ կուզէ, իւր հովիւը փախաւ. պատճառն իւր իրաւանց ճշդութիւնն էր։ Ակնայ վիճակին հովիւ պէտք է, հովիւ չկայ։ Զմշկածագի հովիւ ինքնին խոյս տուած է։ Եւդոկիոյ վիճակ անհովիւ է և խառվութեանց մէջ կը յուզի։ Ամասիա և Մարզուան դաշնակ անհովիւ մնացած կը յուզուին։ Երզնկա հովիւ կուզէ, անհովիւ մնաց։ Դերճան վաղուց անտի հովիւ կուզէ, հովիւ չկայ։ Մուշ հովիւ կուզէ, հովիւ չկայ։ Բաղէշ հովիւ կուզէ, զի իւր հովիւ տարագիր եղած է։ Վան հովիւ մի ընտրելու համար ահագին կռիւ բացուած է։ Զեմ յիշեր Կիլիկիոյ վիճակի տարաբաղդ ժողովրդոց անտէրունչ վիճակը, որոց համար Սսայ խեղճկաթուղիկոսը հանապազ գրելով թախանձելով վարդապետ կուզէ, հաղիւ հազ Ո. ընտրի Դաւիթ կաղ վարդապետ մի գտայ և իրեն զրկեցի, ո՞հ։

Ա. հաւասիկ եկեղեցւոյ վիճակ, ահաւասիկ իւր սրտառուչ նկարագիր, Երեսփոխանք Հայոց, զոր հարիւրէն մին հաղիւ գրեցի, որ ինչպէս գիմ սիրա՝ և ձեր սիրտ դառնացուց ու ճմլեցուց, թէ դեռ անտարբեր էք։ Եթէ այդպէս, ուրեմն վերցուցէք. մի՛ խղճէք վերցուցէք միանգամայն եկեղեցւոյ պաշտօնէութիւնն, ոչ Հայրապետ, ոչ Պատրիարք, ոչ Եպիսկոպոս, ոչ վարդապետ և ոչ Քահանայ։ Թող ցէր ինքնին հովուէ իւր եկեղեցին և ժողովուրդը. դուն ալ հրէական ժողովրդին պէս երեսդ երկինքէն դարձուր և խօսէ այս բանը, «Անակրունչ շրջեցուք և առ քեզ ոչ եկեսցուք, ևն.»։

Իսկ եթէ առ այս քաւ կ'ըսես և կը սրտմտիս, այսպիսի քրիստական հայհոյութիւնք քո սրտէն քո երիկամունքէն և քո բերանէն հեռու լեռն, դուն Ս. Գրիգորի անբիծ հաւատքն ունիս և նորա անկած որդեաւանկն ես, անշուշտ կ'ըսես. ինձ համար մշակ պէտք է, հովիւ պէտք է, եկեղեցի պէտք է, տաճար պէտք է, սեղան պէտք է, քահանայ պէտք է, պատարագ պէտք է, խունկ պէտք է։ Մինչեւ յե՞րբ. մինչև այսօր և վաղ, և ի կատարած աշխարհի, քանի որ Քրիստոսի ես, հաւատք ունիս և Աւետարան գիրկդ է։ Եթէ այսպէս, Երեսփոխանք ժողովրդեան, ուրեմն արդարութեան կշռով օրէնք սահմանեցէք. Կրօնական ժողովոյ պարտեայ հետ իւր իրաւունք հատատեցէք. և այնուհետև եթէ տակաւին նա իւր պարտքերը յանուն եկեղեցւոյ չ'գործադրէ. խստութեամբ և դատաստանաւ հաշիւ պահանջեցէք։

Ա. յս խնդիրը կտակ մի է. զոր կը թողում իմ յաջորդին և միայն կ'ապաչեմ զձեզ որ քան զամէն խնդիր առաւել ուշադրութեան առնուք։ Մի վարանիր դարմանք գիր բին և քու ձեռքդ է, փառն զի եկեղեցւոյ մեծ մատակարար դուն ես, նորա տաճարին բանալին և գանձը քու ծոցդ և քու հակողութեանդ տակն է։ Մեք այժմ այդ տաճարին վարձուորն և սարուկ մշակներն եմք. եթէ խնատուն ես, եկեղեցւոյ փառք կը սիրես և կը խորհիս ազնուացուցանել Քրիստոսի եկեղեցւոյ պաշտօնեաները, այդ փառք և շահ դարձեալ քեզ կը վերաբերին։

Ա. հաւասիկ իմ իրաւացի պատճառներ, Երեսփոխանք Հայոց, զորս կ'ազաչեմ բարձր ուշադրութեան առնուք և նոցա խորը թափանցեցէք և պիտի տեսնաք թէ Խրիմեան ոչ միայն անկեղծ գիտակցութեամբ այլև փորձառական ճշմարտութեամբ գրած է։

Իբրև կտակ կաւանդեմ Ձեզ շուտ և արագ փութացուցէք Վերանոր-Բիւն Սահմանադրութիւն։ Սահմանադրութեան իրաւանց և պարտուց հիմնական օրինաց որչափ կարելի է անվրէպ գործադրութիւն։ Վարչական կազմութեան մէջ աշխատութեանց բաժանումն, գործադիր իշխանութեան անդամոց միութիւն, և համաձայնութիւն. գիտցէք այդ վարչական մեքենայն առանց այս համեմատութեան չի շարժիր։

Ա. յսչափ և այսքան բաւ է։ Ներողութիւն կը խնդրեմ այն ամէն թերութեանց համար, զոր իբրև մարդ սիրալկան և տպիկար գործած եմ. ներողութիւն կը խնդրեմ համայն Երեսփոխանական դասէն, ներողութիւն կը խնդրեմ իմ վաստակակից Կրօնական ժողովոյ Ս. Հարց դասէն, ներողութիւն կը խնդրեմ Քաղաքական ժողովոյ Մեծ. Անդամներէն. ես գձեզ չամբաստանեցի, այլ գրութիւնն ամբաստանեցի, որոյ ուղղութիւնն և փոփոխութիւնն օրէնագիր ժողովոյն կը պատկանի։

Ա. յլ ես կը մնայ ինձ օրհնել համայն Հայոց Ազգ և հրաժեշտս մատուցանելով առ Երեսփոխանութիւնդ Հայոց՝ Վահանայ Գողթնացւոյն պէս պաղատիլ։

«Ա. ղաչակեցէք որ տեսանեմ զորչափութիւն աւերածոյ երկրին իմոյ Հայրենեաց»։ Թոյլ տուէք այս ամենուն ելնեմ և հոն նստիմ, թերևս այսու խաղաղութեան օրինակ մի ընծայեմ իմ յաջորդիս։ Թոյլ տուէք, եթէ իբրև Պատրիարք չ'կրցայ՝ իբրև Խրիմեան վարդապետ դործել, թերևս իբրև Խրիմեան՝ կարենամ իբրև Պատրիարք դործել։ Երթա՛ս բարեաւ, Արծուի, ասացէք. գնա՛, գտի՛ր վարագ՝ քու սիրած խուցն ու գրիչ և սակաւիկ մի թանապուր. հոն մենացիր, զի նաև խռովեալ՝ փութայ 'ի նաւահանգիստ։

Ընթերցումէն ետև Նորին Արբազնութիւնը պահ մը առանձնանալու և հանգստանալու համար մեկնեցաւ ժողովէն։

Միևնոյն միջոցին ժողովն ալ քառորդ մը դադար առաւ, և ժամը 9 ին նորէն Ատեանը բացուեցաւ։

Ատենապետ էֆ. ժողովին ներկայացուց բազմութիւ ստորագրութեամբը լի երկու ժողովրդական հանրագիր, որք պահ մը առաջ դիւանին տրուած էին, և որոց մէկն՝ Ս. Պատրիարքին դէմ ժամանակէ մը 'ի վեր լրագրաց ոմանց և հասարակութեան մէջ պրտրտած տարաձայնութեանց քննութիւնը կը խնդրէր, և միւսն Քաղաքական և Կրօնական ժողովոց մի քանի անդամոց դէմ բողոք մ'էր։ Ատենապետ էֆ. կարդաց զանոնք 'ի տեղեկութիւն ևեթ ժողովին և յայտարարեց թէ ժողովն ըստ օրինի պարտաւոր չէ բնաւ այսպիսի հանրագրութեանց նպատակին ազդեցութեանը տակ գտնուիլ և զանոնք իր ընթացքին առաջնորդ բռնել. այլ իր միայնակ պարտքն է, այսպիսի գրութիւններէ լոկ ծանօթութիւն մը առնելէ ետև, արդարութիւնն ու օրէնքը պաշտպանել ազատ վիճաբանութեամբ, հանդարտ ոգւով և որ և իցէ բարոյական ձնշման երկիւղներն իրմէ հեռացնելով։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ 17 ԵՐԵՍՓՈՒԱՆԱՑ

Ատենապետ էֆ. անմիջապէս օրուան խնդիրը ձեռք առնելով, ժողովոյն ներկայացուց 17 Երեսփոխանաց կողմէ նոյն պահուն տրուած գրաւոր առաջարկութիւն մը, և կարդաց զայն։ Ահաւասիկ պատճէնը.

«Նկատելով որ Ընդհանուր ժողովոյս և-
«կած հրաժարագրերը պատճառաբանեալ են,
«հետևաբար ժողովս դատաւորական կերպա-
«բանքի կը վերածեն, կառաջարկենք որ երե-
«կու յանձնաժողով կազմուի. մին՝ հրաժա-
«բականներուն պատճառները քննելով՝ մինչև
«8 օր տեղեկագրով մը իր քննութեան ար-
«դիւնքը ժողովոյս ներկայացնէ. և միւսը՝
«մինչև հրաժարականաց խնդրոյն լուծումը
«Պատրիարքարանի մէջ գործադիր իշխանու-
«թեան պաշտօն վարէ։»

3 Օգոստոս 1873

(Սորագրութիւն)

ԽՈՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՍԿԻՆՏԷՐԵԱՆ
ՂԵՒՈՆԴ „ ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ
ՆԵՐՍԷՍ „ ՍԱՄԱԹԻՈՅ
ԽՈՐԻՆ ՓԱՀԱՆԱՅ ՓԷՀԼԻՎԱՆԵԱՆ
Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ց. ԹԻՒԼԵԱՆ
Կ. Ս. ԻԹԻՃԵԱՆ
Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ
Ց. Ս. ՄԱԶԼՈՒՄԵԱՆ
ՄԱՆՈՒԿ Ճ. ԱՐԱՊԵԱՆ
ՊՕՂՈՍ ՃԻԼԱՃԵԱՆ
Ց. ԵՆՄԻՆԻՃԵԱՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ
Տ. Մ. ԷՆԳՈՒԼԻՃԵԱՆ
Թ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Առենապետ Էֆ. Ժողովոյն ուշադրութիւնը կարդացուած առաջարկութեան վրայ հրաւիրելով ծանոյց որ այս մասին դիտողութիւն ունեցող երեսփոխանք պէտք է խօսք առնուն կարգաւ և իրենց կարծիքը յայտնեն։

ՊԷԿԵԱՆ Թ. Էֆ. — Խնդիր մը կայ Ընդհանուր ժողովոյ առեանն եկած, կամ լաւ ևս երկու խնդիր մէկ մէկու հետ կապուած, այն է Սրբազան Պատրիարք Հօր և Վարչութեան քաղաքական ժողովոյ հրաժարականները։ Մեք հոս հրաւիրուած ենք մեր կարծիքն առ այս յայտնելու. բայց դիւանը 17 երեսփոխանաց կողմէ գրաւոր առաջարկութիւն մը ներկայացուած ըլլալը յայտնելով՝ նոյն առաջարկութեան վրայ կը հրաւիրէ մեր ուշադրութիւնը։ Կ'ընդունիմ նախ այդ հրաւէրին պատասխանել և յետոյ բուն խնդրոյն վրայ խօսիլ։

Առաջարկութեան վերջին մասն՝ որ գործադիր իշխանութիւն վարելու համար յանձնաժողովի մը կարգման կը վերաբերի, բաւական պարզուած չըլլալով՝ չկրնար հասկցուիլ թէ արդեօք այդ յանձնաժողովը բուն իսկ Պատրիարքին և քաղաքական ժողովոյն պաշտօնը՞ պիտի վարէ. ահա այս կէտն է որ բացատրութեան կարօտ կը դտնեմ։ Եթէ գործադիր իշխանութեան Յանձնաժողով ըսելով կուզեն հասկցնել թէ Պատրիարքին և քաղաքական ժողովոյն իշխանութիւնը պիտի վարէ, զայդ ո՞ր ազգային օրէնքէն կ'առնուն. Սահմանադրութեան մէջ չկայ այդպիսի տրամադրութիւն մը, այլ Սահմանադրութիւնն այսպիսի պարագայի մը մէջ՝ երբ Պատրիարք կամ գործադիր իշխանութիւն պաշտօնէ դադրի, թաւն ժողովով Տեղապահ մը դնել կը տրամադրէ, որնոր անմիջապէս կը նախագահէ Վարչութեան ժողովոց մինչև Պատրիարքի ընտրութիւնը։ Ա. այժմ այս կէտին վրայ ասկէ աւելի խօսքը մոռնել չուզելով կը թողում նոյն ինքն առաջարկողաց՝ որ իրենք բացատրեն, և ես կը դառնամ Սրբազան Պատրիարքին և քաղաքական ժողովին հրաժարականաց խնդրոյն, որ Ընդհանուր ժողովոյ ներկայացեալ բուն խնդիրն է։ Երկու կողմին հրաժարագրերն ալ կարդացուեցան. Սրբազան Պատրիարքն երիարօրէն բացատրեց իւր հրաժարման պատճառները, և եթէ լաւ կը յիշեմ, իւր պատճառաբանութիւնները գլխաւորապէս սա կէտին կամ եզրակացութեան վրայ ամփոփեց թէ ինք չամբաստանէր ոչ կրօնական և ոչ քաղաքական ժողովներն, այլ կ'ամբաստանէ միայն դրութիւնը։ Եւ որովհետև իւր դիտողութիւնները Սահմանադրութեան Վարչական դրութեանը վրայ էին, ասկէց կը հասկըցուի թէ Սրբազան Պատրիարքին ամբաստանել ուզած դրութիւնը նոյն իսկ ներկայ Սահմանադրութեան դրութիւնն է։ Նորին Սրբազնութիւնը Սահմանադրութիւնն անբաւական դատելով անհրաժեշտ կը համարի փոփոխութիւն մտցնել ներկայ Վարչական դրութեան մէջ, և ազգային գործերն երկու կարգի բաժնելու դրութեան պէտքը կ'առաջարկէ տեղականը գաւառականէն զատելով։ « Ես այս առաջարկութիւնը վերաբերեալ Յանձնաժողովին ալ ըրի կ'ըսէ. մանուկ ըլլար՝ կը համոզուէր իմ փաստերէս, և սակայն մերժեց իմ առաջարկութեանս ստիպողականութիւնը »։

Իրաւ է թէ Նորին Սրբազնութիւնն այս առաջարկութիւնը նոյն իսկ Ընդհանուր ժողովոյ վստահութեամբը պատուեալ և անկէ ընտրեալ Սահմանադրութեան Վերաքննիչ յանձնաժողովին ալ հաղորդած էր ասկէ առաջ. այս Յանձնաժողովն՝ որոյ անդամներն ինծմէ զատ արժանեաց տէր անձինք են, խորին ուշադրութեան առաւ այս խնդիրը, և տեսնելով թէ ներկային մէջ անկարելի է այսպիսի փոփոխութիւն մը մտցնել առանց Սահմանադրութիւնը հիմնովին վեր 'ի վայր ընելու, ազգային համար գործադրելիութեան հաւանականութիւնն զգացուց Սրբազան Պատրիարքին և խոստացաւ իւր այս առաջարկութիւնը՝ կարգն եկած ժամանակը դարձեալ նկատողութեան առնուլ։ Սակայն Սրբազան Պատրիարքն այն տաքնչապառնալեօք իմն յայտարարեց Յանձնաժողովոյս առեանին մէջ թէ պիտի հրաժարի։ Ըսել կուզեմ թէ Սրբազան Պատրիարքին այսօրուան հրաժարականը նոր չէ, արդէն 2 ամիս առաջ Վերաքննիչ Յանձնաժողովին մէջ ծանուցած էր, և այսօր ալ նոյնը կը կրկնէ թէ իւր առաջարկութեան մերժուելուն համար յուսահատեալ կը հրաժարի։ և ասոր հետ մեկտեղ կերպիւ մը կ'ամբաստանէ զՅանձնաժողովն ըսելով թէ բան մը չկրցաւ գործել մինչև այսաօր։ մինչդեռ յանձնաժողովն 3 նիստ միմիայն Նորին Սրբազնութեան տարաժամ պահանջմամբ ըրած առաջարկութեան ստիպողականութիւն չունենալն որոշելու համար զոհեց։ Եւ սակայն Յանձնաժողովը Սրբազան Պատրիարքին պահանջումը մերժելով, չըսաւ թէ իւր առաջարկած երկու մտնաժողովներն այժմէն բնաւ չեն կրնար հաստատուիլ, այլ այդ մասին Վարչութեան ժողովոց հետ խորհեցէք և մէջերնիդ համաձայնեցէք ըսաւ, և եթէ պատասխանատուութիւնը ձեր վրայ առնելով տեղական և գաւառական մասնաժողովներ հաստատէք, ինչպէս հաստատուած էր երբեմն նախորդ Վարչութեան օրով, օրէնքը բնաւ արգելք չըլլար ձեզ։ Նկատողութեան արժան է թէ մէկ կողմէ Սրբազան Պատրիարքն իր առաջարկութեան կարևորութեանն ու ստիպողականութեանը վրայ պնդած ատեն, միւս կողմէ Կրօնական ու քաղաքական ժողովոց անդամները հակառակը կը պնդէին։ Ուստի ես իրրև անդամ Վերաքննիչ յանձնաժողովոյ կը յայտարարեմ թէ Յանձնաժողովը բնաւ պատասխանատու չէ Սրբազան Պատրիարքին հրաժարմանը։

Այս պահուս Խիկիկեան և Աղարէկեան Պ. էֆէնտիներն ընդմիջելով Պէկեան էֆ.ի խօսքը, բողոք կը բառնան խնդրին շեղելուն համար, և Առենապետ էֆ. կը պարտաւորի պէտք եղած ազդարարութիւնն ընել յիշեալ Առենարանին։

ՊԷԿԵԱՆ Թ. Էֆ. — Որովհետև Սրբազան Պատրիարքն ամբաստանեց Վերաքննիչ Յանձնաժողովը, « մանուկը ըսէր կը համոզուէր, թիւնը՝ կարգն եկած ժամանակը դարձեալ նկատողութեան առնուլ։ Սակայն Սրբազան Պատրիարքն այն տաքնչապառնալեօք իմն յայտարարեց Յանձնաժողովոյս առեանին մէջ թէ պիտի հրաժարի։ Ըսել կուզեմ թէ Սրբազան Պատրիարքին այսօրուան հրաժարականը նոր չէ, արդէն 2 ամիս առաջ Վերաքննիչ Յանձնաժողովին մէջ ծանուցած էր, և այսօր ալ նոյնը կը կրկնէ թէ իւր առաջարկութեան մերժուելուն համար յուսահատեալ կը հրաժարի։ և ասոր հետ մեկտեղ կերպիւ մը կ'ամբաստանէ զՅանձնաժողովն ըսելով թէ բան մը չկրցաւ գործել մինչև այսաօր։ մինչդեռ յանձնաժողովն 3 նիստ միմիայն Նորին Սրբազնութեան տարաժամ պահանջմամբ ըրած առաջարկութեան ստիպողականութիւն չունենալն որոշելու համար զոհեց։ Եւ սակայն Յանձնաժողովը Սրբազան Պատրիարքին պահանջումը մերժելով, չըսաւ թէ իւր առաջարկած երկու մտնաժողովներն այժմէն բնաւ չեն կրնար հաստատուիլ, այլ այդ մասին Վարչութեան ժողովոց հետ խորհեցէք և մէջերնիդ համաձայնեցէք ըսաւ, և եթէ պատասխանատուութիւնը ձեր վրայ առնելով տեղական և գաւառական մասնաժողովներ հաստատէք, ինչպէս հաստատուած էր երբեմն նախորդ Վարչութեան օրով, օրէնքը բնաւ արգելք չըլլար ձեզ։ Նկատողութեան արժան է թէ մէկ կողմէ Սրբազան Պատրիարքն իր առաջարկութեան կարևորութեանն ու ստիպողականութեանը վրայ պնդած ատեն, միւս կողմէ Կրօնական ու քաղաքական ժողովոց անդամները հակառակը կը պնդէին։ Ուստի ես իրրև անդամ Վերաքննիչ յանձնաժողովոյ կը յայտարարեմ թէ Յանձնաժողովը բնաւ պատասխանատու չէ Սրբազան Պատրիարքին հրաժարմանը։

Այս պահուս Խիկիկեան և Աղարէկեան Պ. էֆէնտիներն ընդմիջելով Պէկեան էֆ.ի խօսքը, բողոք կը բառնան խնդրին շեղելուն համար, և Առենապետ էֆ. կը պարտաւորի պէտք եղած ազդարարութիւնն ընել յիշեալ Առենարանին։

ՊԷԿԵԱՆ Թ. Էֆ. — Որովհետև Սրբազան Պատրիարքն ամբաստանեց Վերաքննիչ Յանձնաժողովը, « մանուկը ըսէր կը համոզուէր,

ա՛լ ասոր վրայ համբերութիւնս հատաւ և հրաժարեցայ » ըսելով. հարկ եղաւ ինձ այս յայտարարութիւնն ընել իբրև անդամ Յանձնաժողովոյ։

ՕՏԵԱՆ Գ. Էֆ. — Կարծեմ թէ Պէկեան էֆէնտին Վերաքննիչ Յանձնաժողովին կողմէ խօսելու պաշտօն չունի հոս։ Վիճաբանութեան դրուած կէտը 17 Երեսփոխանաց կողմէ եկած գրաւոր առաջարկութիւնն է, որ երկու մասէ կը բաղկանայ. այսինքն կ'առաջարկուի երկու Յանձնաժողով դնել, մէկը հրաժարականաց խնդիրը քննելու և միւսն առժամանակեայ գործադիր իշխանութիւն վարելու համար մինչև հրաժարականաց խնդրոյն լուծումը։ Պէկեան էֆէնտի թողլով բուն վիճաբանելի կէտը՝ Սրբազան Պատրիարքին ատենարանութիւնը դատափետելու ելաւ. բայց վիճաբանութեան սահմանէն դուրս է առ այժմ այդ կէտը, վասն զի ժողովը դեռ չորոշեց անոր վրայ վիճաբանիլ։ Ուստի կը խնդրեմ դիւանէն որ վիճաբանութիւնն իւր սահմանէն դուրս չեղել չտայ, որպէս զի պատճառ չըտրուի Երեսփոխանաց մէջ տժգոհութիւններ յառնելու։

Այս խորհրդածութիւնը կը կրկնեն միանդամայն ուրիշ Երեսփոխանք։

Առենապետ էֆէնտին հրաւիրեց երկրորդ անդամ զՊէկեան էֆէնտի շարունակել իւր խօսից թելը, խնդրելով սակայն՝ որ Սրբազան Պատրիարքին ատենարանութիւնը խնդրոյ նիւթ չընէ, այլ միայն 17 Երեսփոխանաց առաջարկութեան մասին դիտողութիւն եթէ ունի յառաջ բերէ։

ՊԷԿԵԱՆ Թ. Էֆ. — Ես դիւանէն կանխաւ թոյլտուութիւն ուզեցի և այնպէս բուն խնդրոյն խօսքը մտայ, և այդ իմ իրաւունքս էր, որովհետև ես իբրև Երեսփոխան՝ Սրբազան Պատրիարքին հրաժարականի խնդրոյն վրայ կարծիքս յայտնելու եկած եմ։ 17 Երեսփոխանաց առաջարկութիւնն երկրորդական է որուն վրայ քուէարկութիւն կրնայ ըլլալ խնդիրը լուսաբանուելէ ետև. եթէ ընդմիջումներ պիտի ըլլային, լաւ էր որ կանխաւ թոյլ չտայր ինձ դիւանը. քանի որ թոյլ տուուեցաւ, պէտք էր որ այս խօսքերն ընէի, որոց եզրակացութիւնը հոն կը յանդի թէ մէկ կողմէ Սրբազան Պատրիարքն արդի Վարչական դը-

ութիւնն անբաւական և անգործադրելի կը համարի, միւս կողմէ Քաղաքական ժողովը նոյն դրութեան գործադրելիութիւնը կը պընդէ. երկուքին պահանջման մէջ տարբերութիւնը խիստ մեծ է. մին կ'ըսէ թէ այս դրութիւնը չկրնար շարունակուիլ, իսկ միւսն ընդհակառակն կը պնդէ թէ կրնայ շարունակուիլ. և այս անհամաձայնութիւնը մինչև իսկ երկու կողմին ալ հրաժարմանն աւիթ տալով խնդիրն այժմ հոս Ընդհանուր ժողովոյ առաջն եկած է։ Սրբազան Պատրիարքը չէ թէ Քաղաքական ժողովն, այլ միայն դրութիւնը կ'ամբաստանէր, կ'ըսէ իւր առաջ բացատրութեանը մէջ, և այս դրութիւնն ալ ներկայ Սահմանադրութեան վարչական դրութիւնն է։ Իսկ Քաղաքական ժողովին հրաժարագիրը բուն ամբաստանութիւն մ'է Սրբազան Պատրիարքին դէմ, իբր թէ Սահմանադրութեան ըստ տեսնայնի գործադրուելուն արգելք կ'ըլլայ։ Մինչ բանիւ խնդիրը ներկայ վարչական դրութեան գործադրելիութեան և անգործադրելիութեան վրայ է։

Ահա խնդրոյն վիճակն այս է. Երեսփոխանութեան կը մնայ ընել ինչ որ պէտք է։

ԹՕՋԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — *Սրբազան Պատրիարքը քանի մը օր առաջ չորս տողով հրաժարական մը ղրկած էր Երեսփոխանաց, որուն մէջ իբր սկզբունք սա միայն կ'ըսէր թէ ասկէ ետև իւր պաշտօնավարութիւնն անկարելի է։ Իսկ այսօր իւր բացատրութեան թղթովը շատ բաներ խօսեցաւ, ազգին վիճակն ընդհանուր կերպով նկարագրեց, ոչ միայն վերաբերեալ յանձնաժողովին, ոչ միայն կրօնական և Քաղաքական ժողովներէն, այլ նաև Երեսփոխանութենէն և նոյն իսկ ինքզինքէն դանգատեցաւ ըսելով թէ ընդհանուր ժողովը դինքն ընտրելուն մէջ սխալած էր, վասն զի ինք չէ կրցած ազգին իր վրայ դրած յոյսերը պահել։*

Ես չպիտի խուզարկեմ Պէկեան էֆէնտիի պէս Սրբազան Պատրիարքին սոյն խօսքերը՝ որոնք վերաբերեալ Յանձնաժողովին նկատմամբ բաւական, ոչ ալ պիտի պատասխանեմ Քաղաքական ժողովոյ նկատմամբ ըսածներուն. Սրբազան Պատրիարքն ընդհանուր տեսութեամբ ազգին վիճակն ալեկոծեալ նաւու մը նմանեցուց։ ազգը զինքը նաւապետ կը ճանաչէր, բայց ինք կը թողու այժմ նաւապետութիւնը. մեք չենք կրնար քննել հոս այդ պաշտօնը լքանելուն պատճառները. նոյնպէս Քաղաքական ժողովն որ նաւատի պաշտօնը կը վարէր, այն ալ պատճառներ մէջ կը բերէ և կը հրաժարի իր պաշտօնէն. անոր համար 17 Երեսփոխանք՝ որոց մէկն ալ ես եմ, առաջարկեցինք որ իբր դատաւոր քննենք, ոչ թէ մանրամասնութեանցը մէջամտելով այս ժողովին մէջ, այլ քննութեան արդիւնքին և հետեւանացը վրայ միայն վիճարանելով։ Պէկեան էֆէնտին միայն մեր առաջարկութեան Բ. մասին վրայ դիտողութիւն ընելով՝ յանուն Սահմանադրութեան արգելք յարուցանել կուզէ մեր առաջարկութեան այն մասին դէմ, և կ'ըսէ թէ Սահմանադրութեան հակառակ է արտաքոյ Պատրիարքի գործադիր իշխանութեան Յանձնաժողով մը կարգել. այս առարկութիւնը շատ սխալ է, երբէք Սահմանադրութիւն արգելք չկրնար ելլել մեր ըրած առաջարկութեան. քանի որ Պատրիարք և Քաղաքական ժողով, երկուքն ալ միանգամայն հրաժարական տուած են, ըսել է թէ գործադիր իշխանութիւն չէ մնացած. ո՞վ կրնայ ըսել թէ առանց պաշտօնէութեան մնայ ազգն ու Պատրիարքարանը. հարկաւ գործադիր վարչութիւն մը պէտք է, այն ալ առժամանակեայ և պայմանաւոր, այսինքն՝ մինչև հրաժարականաց խնդրոյն լուծումը. հետևապէս իւր պաշտօնը չէ թէ հիմնական գործեր տեսնել պիտի ելլայ, այլ միայն այն ընթացիկ գործերն՝ որ իրեն կը դիմեն։ Ով որ կ'ըսէ թէ Սահմանադրութիւնը մեր առաջարկութեան դէմ արգելք կը յարուցանէ, թող բարեհաճի ցոյց տալ թէ կա՞յ արդեօք Սահմանադրութեան մէջ այնպիսի յօդուած մ'ալ, որ Պատրիարքարանն անիշխանութեան մէջ դնելու ծառայէ. այդպիսի յօդուած մը չեն կրնար ցուցընել. ուստի ինչ հարկ կայ առարկութիւններով ժամանակ վատնել, որով յանպէտս վիճաբանութիւնը կ'երկարի և ո՛րքան վիճաբանութիւնն երկարի, այնքան աւելորդ և ընդվզարարար մանրախուզութեանց մէջ պիտի թափառինք. ինձ կը թուի թէ այս մասին վիճաբանութիւնն երկարացնելու պէտք մը չունինք, հետևապէս կը պահանջեմ որ ժողովոյն կարքը հարցուի, և եթէ վիճաբանութիւնը շարունակելու հարկ մը չտեսնէ, անմիջապէս մեր գրաւոր առաջարկութիւնը քննելու դրուի վերջանայ։

ԻՒԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — *Կը ձայնակցիմ Օգսէն էֆէնտիի 'ի նպաստ մեր գրաւոր առաջարկութեան մէջ բերած բոլոր խօսքերուն. սա միայն կը յաւելցնեմ թէ ըստ որում Պէկեան էֆէնտի գործադիր իշխանութիւնն ըստ Սահմանադրութեան խառն ժողովոյ կողմէ ընտրուած Տեղապահի մը յանձնել պէտք է ըսաւ, այս խօսքէն կը հետևի թէ Սրբազան Պատրիարքին հրաժարականը պիտի ընդունուի կամ ընդունուած պիտի ենթադրուի, մինչդեռ հրաժարականի խնդիրն ըստ մեր առաջարկութեան անորոշ պիտի մնայ տակաւին։*

Տ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆ. — *Այն առաջարկութիւնն՝ որ 17 Երեսփոխանք գրաւոր կերպով մատուցին դիւանին, ես ալ ստորագրած եմ, բայց ստորագրելէս առաջ ընկերակցաց հարցուցի թէ առաջարկուած Յանձնաժողովներն ինչ պիտի գործեն և թէ Ս. Պատրիարքը պիտի դադրի՞ իր պաշտօնէն, և եթէ դադրի՝ բնականաբար Եկեղեցեաց մէջէն անուան յիշատակութիւնն ալ պիտի վերնայ. եթէ այսպէս պիտի ելլայ, համամիտ չեմ ըսի։ Անոնք ալ բացատրեցին թէ Յանձնաժողովներէն մէկը Պատրիարքին և վարչութեան անհամաձայնութիւնը պիտի քննէ, և միւսը՝ Պատրիարքարանի պատահական գործերը պիտի նայի, և թէ Պատրիարքը հրաժարեալ չպիտի հրատարակուի մինչև որ անհամաձայնութեան խնդիրը քննուի. այն ատեն ես ալ ստորագրեցի։ Իսկ գալով Պէկեան էֆ.ի այն խօսքին, թէ Ս. Պատրիարք Հոր դրութիւններն առ վերաքննիչ Յանձնաժողովն արդի վարչական դրութեան փոփոխութեանը և տեղական ու դաւառական անուամբ երկու մասնաժողովոց հաստատութեանը կարևորութեան նկատմամբ մերժուեր են նոյն Յանձնաժողովէն, կը պատասխանեմ թէ ես ալ իրև անդամ Յանձնաժողովոյն ներկայ գանուելով Սրբազան Պատրիարք Հոր առաջարկութեան վիճաբանութեանը միջոցին ես Պէկեան էֆ.ի հակառակը խօսած և ընդունելի դատած եմ Պատրիարքի առաջարկութիւնը, և իմ խօսքերս արձանագրուած են Յանձնաժողովոյն դիւագրութեանց մէջ. դարձեալ հիմա Սրբազան Պատրիարք Հոր նոյն առաջարկութեան ընդունելութիւնը կարևոր կը դաւանիմ մանաւանդ վարչութեան այս տագնապալից վիճակին մէջ, ուր թաղային վէճերն ու խռովութիւններն անպակաս են և ազգային կարևոր գործոց երեսի վրայ մնալուն պատճառ են եղած։*

Աստենապետ էֆէնտին վերոգրեալ խօսքերուն առթիւը Երեսփոխանաց խնդիրէն դուրս չը շեղելին դարձեալ կը յիշեցնէ խնդրելով որ որչափ կարելի է իրենց խորհրդածութիւնքը համառօտ և ազգու փաստերով առաջ դնելէ ետև առաջարկութիւններն ամփոփեն 'ի նպաստ կամ ընդդէմ առաջարկութեան 17 Երեսփոխանաց։

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — *Պէկեան էֆ. իւր ըրած դիտողութեանց մէջ 'ի կարգի այլոց բանից ըսաւ նաև թէ Սրբազան Պատրիարքը Սահմանադրութեան դրութիւնը կամբաստանէ։ Պէտք է խնդրեմ իմ պաշտօնակիցներէս որ այս ժողովին մէջ Սահմանադրութիւն բառը չարաչար գործածելու սովորութիւններս ետ թողունք, որպէս զի . . . .*

Պէկեան էֆ. (ընդմիջելով) — *Իմ խօսքերս կայլայլեք. ես ըսի թէ Ս. Պատրիարքը դրութիւնը կամբաստանէ և դրութիւն ըսելով Սահմանադրութեան վարչական դրութիւնն ըսել կուզէ։*

ԻՓԷԿՃԵԱՆ Էֆ. — *Եթէ ձեզ հաճելի չեն այս խօսքերս, կրնաք ականջնիդ խցել չլսելու համար։ Սրբազան Պատրիարքը Սահմանադրութեան դէմ կը դանդատի կըսեն. Սահմանադրական դրութիւնն Ազգէն բղխեալ իշխանութիւն ըսել է և ոչ թէ ժառանգական իրաւամբ կամ յԱստուածուստ տուեալ իշխանութիւն։ Սրբազան Պատրիարքն զգալի կերպիւ ցոյց թէ Սահմանադրութեան չէ թէ հիմնական սկզբունքն, այլ անոր վարչական կազմութեան ձևն ու գործադրութիւնն Ազգին շահերուն համաձայն չեն։ Շատ անգամ թէ՝ մասնաւոր խօսակցութեան մէջ և թէ՝ հրապարակաւ լսած եմ Սրբազան Պատրիարքէն և ինծի հետ շատերն ալ համոզուած են թէ յիրաւի վարչութեան ներկայ վիճակին մէջ ոչ կրօնական ժողովը և ոչ Քաղաքական ժողովը Ցանկաստանի հայոց ժողովները չեն կազմեր. այս ըսածս հաստատելու համար բաւական է*

Կրօնական և Քաղաքական ժողովոց մինչև ցայսօր տեսած գործքերը քննել և անոնց արդիւնքը սա դրասեղանին վրայ բերել. այս ընելովս չեմ ուզեր ամբաստանել ոչ Կրօնական և ոչ Քաղաքական ժողովները, այլ իրաց վիճակը ներկայացնել կուզեմ. Ուստի քանի որ Արքաքան Պատրիարքը կըսէ թէ ներկայ վարչական ձևը փոխելու է, այսինքն՝ Պօլսոյ և գաւառաց գործերն իրարմէ բաժանելու է. այս առաջարկութեան մէջ շատ խոհական և ազդաչէն դիտաւորութիւն մը կը տեսնեմ, Քաղաքական ժողովը կամբաստանէ զԱրքաքան Պատրիարքն իրը հակասահմանադրական. բայց նա ոչ զոր ամբաստանեց, այլ մէյոյն վարչական դրութեան ընթացքին դէմ գանգատեցաւ, և ներկայ սահմանադրական դրութեան անգործադրելիութիւնը բացատրեց, ինձ համար Արքաքան Պատրիարքը պէտք չէ որ հրաժարական տայ մինչև ներկայ չիօթ ընթացքին բարեկարգութեամբ վախճան մը չը տրուի։

(Երկրաշարժ աղմուկ և իրարանցում ժողովրդեան մէջ)

Ատենապետ էֆէնտին ազդու կերպով կը յիշեցնէ նորէն որ ժողովուրդը պէտք է միանակ ունկնդիր ըլլայ և ոչ թէ միջամտէ, որ Երեսփոխանք ամենայն ազատութեամբ իրենց խօսքերը ընդհանուր ազգը ներկայացնող պատկառելի ժողովոյն միայն ուղղելու են առանց ականջ կախելու դրսի միջամտութեանց որք բնականաբար ապօրինաւոր պէտք են համարուիլ։ «Հանդիսականք, ըսաւ, որչափ որ լուռ «կենան և Երեսփոխանաց վիճարանութիւնը «յարգեն հանդարտ մտօք, այնքան ալ ոչ մի- «այն իրենց ամէն մէկուն՝ այլ և այսքան մի- «լեոնաւոր ազգայնոց եղբարց կողմէն օրինա- «ւորապէս ընտրեալ ներկայացուցիչ ժողովը «յարգած և անոր պատիւը պահպանած պի- «տի ըլլան»։

ԻՓԷԿՃԵԱՆ Էֆ. (շարունակելով). — Քէչ շատ դատողութիւն ընելու ձեռնհաս վիճակին մէջ գտնուած ըլլալով միշտ տեսած ու լսած եմ թէ յաճախ ամբաստանութիւններ կըլլան պաշտօնական անձանց դէմ. Պատրիարքը կամբաստանէ ժողովները, ժողովներն ալ զՊատրիարքն. այս ամբաստանութիւններն միշտ կըլլան, մանաւանդ Պատրիարքին դէմ ամբաստանութիւնները շարունակ են։ ինչո՞ւ. — վասն զի չեմ յիշեր որ զէթ միանգամ այս պիտի ամբաստանութեան դէպք մը ըստ օրինի քննուած և իրաւունքն ո՞ր կողմն ըլլալը հրատարակուած ըլլայ՝ ի գիտութիւն Ազգին։ Ուստի դարձեալ կը պնդեմ թէ պէտք է որ Արքաքան Պատրիարքն ետ առնու իւր հրաժարականը և իր պաշտօնը շարունակէ. իսկ միւս կողմէն գրաւոր առաջարկութեան այն մասը՝ որ քննիչ Յանձնաժողովի մը կազմութեան կը վերաբերի, ընդունելով ես ալ կը համաձայնիմ թէ քննութիւն մը անյապաղ պէտք է և արդիւնքը հրատարակուելու է՝ ի գիտութիւն Ազգին։

(Այն միջոցին ժողովրդեան մէջէն մէկը ընդմիջելով մէկ քանի նախատալից խօսքեր արտասանելու միջոցին, անմիջապէս ժողովուրդը զանի իր մէջէն դուրս կը հանէ։

Ատենապետ էֆ. ժողովրդեան այս բարեմասնութիւնը և ցուցրցած արդարասիրութիւնն ու գովելի ընթացքը նկատողութեան առնելով՝ ի դիմաց Ընդ հանուր ժողովոյն շնորհակալութիւն կը յայտնէ և կը յորդորէ սոյն վարմունքը շարունակել։)

Եթէ իրաւունքը Քաղաքական ժողովոյ կողմն ալ ըլլայ, պէտք է կըսեմ այս անգամ առանց անուշ տեղը կապելու դրութեանը հեռանելու քննիչ Յանձնաժողով մը դրուի. այս հիմ առաջարկութիւնս։

ՊԷԿԵԱՆ Թ. Էֆ. — Կը ցաւիմ որ 17 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութեան վրայ իմ զրուցած խօսքերս աղէկ չեն հասկցուած. ես առաջարկութիւնը մերժել չուզեցի, եթէ շտապաւոր և արդար առաջարկութիւն մը կայ, այն իսկ է. միայն գործադիր Յանձնաժողովի մասին ըսի որ աղէկ պարզուած չէ այն կէտը թէ արդեօք Պատրիարքին և Քաղաքական ժողովին կրկնակի պաշտօնները նոյն Յանձնաժողովի՞ն վրայ պիտի կեդրոնանան։ Ըսուեցաւ թէ պայմանաւոր է, այսինքն 8 օր պիտի տեւէ անոր պաշտօնը. ինձ համար յայտնի չէ որքան կը տեւէ, կարելի է դէպքերն այնպէս բերեն որ փոխանակ 8 օրուան 8 ամիս տեւէ. առաջարկութեան այս մասին մէջ մթին կէտեր կան՝ զորս պարզելու համար էր որ հարցուցի և որոշ բացատրութիւն մը չկրնալ առնելուս համար կը պարտաւորիմ նորէն հարցնել թէ Յանձնաժողովը գործադիր իշխանութիւն պիտի վարէ ընտրելով ի՞նչպիսի հասկընալիք, ո՞վ պիտի նախագահէ այդ Յանձնաժողովին, Բ. Դրան մատուցանելի թուղթերներն ո՞վ պիտի կնքէ և վաւերացնէ, որովհետև գործադիր իշխանութիւն ընելով ես Բ-Գրէրէր դրնել կը հասկընամ։ Միւս կողմէ Բ. Դրան տեղեկութիւն պիտի տրուի՞ այս մասին, և եթէ տեղեկութիւն տրուելու ըլլայ պիտի ընդունուի՞. ես այնպէս կը կարծեմ թէ Բ. Դուռն առանց Պատրիարքի կամ Տեղապահի նախագահութեան գործադիր իշխանութիւն չընդունիր։ Ասոնք են ահա ուշադրութեան առնուելիք կէտերը. եթէ ասոնք լուծուին, ինձ համար կնճիռը կը վերնայ և այն ատեն կրնամ այս առաջարկութեան համար քուէ տալ։

Գալով Իփէկճան էֆ.ի, որ դժբաղդաբար չեղեցաւ արդարութենէն և բաւ թէ Ս. Պատրիարքին հրաժարականն անմիջապէս ետ առնել տալու և ստիպելու է որ շարունակէ իւր պաշտօնը, այս մասին կարելի է որ մէկ կամ միւսներն ալ ելլեն իրեն դէմ բսեն թէ շրջա՞ր այդ, և թէ ի՞նչ իրաւունք է որ Ս. Պատրիարքն իր պաշտօնը շարունակէ և Քաղաքական ժողովը չշարունակէ բանի որ երկուքն ալ հրաժարած են և երկուքին ալ հրաժարականը պատճառաբանեալ է. այս ալ օրինաւոր դիտողութիւն մ՝է կարծեմ, և ասոր համար արդարացի կը գտնեմ 17 Երեսփոխանաց առաջարկութիւնը, թէ որ կարելի ըլլայ լուծել նկատողութեան առած կնճիռս։ Թէ որ բանի մը ամիս տ՝է գործադիր իշխանութիւն վարող Յանձնաժողովը, ի՞նչպէս պիտի կարենայ Բ-Գրէրէր ընել և ո՞վ պիտի կնքէ. ասոնք դիտցուելու են կանխաւ։ Եւ եթէ առարկուի թէ հիմակուընէ Արքաքան Պատրիարքին ետ բանակցելով Բ-Գրէրներն ինք կընքելու հաւանութիւն առնուի, այս կնճիռն ալ կը լուծուի առանց Բ. Դրան խնայնելու Ներին Արքաքութեան և Քաղաքական ժողովին հրաժարած ըլլալը։ Ես կը կարծեմ թէ ասոնք ալ սխալ բայլ մը առնուած կըլլայ։ Կարծեմ կրցի միտքս հասկցնել։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. Էֆ. — Մեր առաջարկութեան մէջ նախագահի կէտը բաց թողած է, և շատ ուշադրութեամբ. որովհետև Ս. Պատրիարքին հրաժարականը տակաւին ոչ ընդունուած է և ոչ չընդունուած. եթէ Ս. Պատրիարքը չպնդելով իր հրաժարականին վրայ թագրիրները կը կնքէ լա՛ւ, չենք կրնար մի՛ կնքեր ըսել. նոյնպէս գործադիր Յանձնաժողով պիտի դնենք Քաղաքական ժողովին գործերը տեսնելու, զուցէ Բ. Դուռը չընդունիր ըսուեցաւ. ինչո՞ւ. մեզի համար ներքին գործեր են ժողովներ դնել վերցնելը։ Եթէ Ս. Պատրիարքն այդ Յանձնաժողովին որոշումներն ստորագրէ, շատ լաւ. թէ որ ինքը չուզէ ստորագրել, իր հրամանաւը փոխարէն հայրնալ կրնայ ստորագրել. ուրեմն մեզի համար նախագահի դժուարութիւն չկայ, և նախագահի խնդիր չենք կրնար յարուցանել, քանի որ Ս. Պատրիարքին հրաժարականն ընդունած չենք։

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — Օգսէն էֆ.ի խօսքերուն իրրև շարունակութիւնը սա պիտի ըսեմ թէ ժողովն իր անկողմնակալութեան և անաչառութեան ապացոյցը պէտք է տայ այս պիտի ալէկոծեալ ժամանակի մը մէջ, երբ 2 հրաժարական գրեր եկած են ժողովոյս գլուխին վրայ, մէն՝ Ս. Պատրիարքին կողմէ և միւսը՝ Քաղաքական ժողովոյ կողմէ։ Ոչ մէկն և ոչ միւսն պակասաւոր է չենք կրնար ըսել վասն զի երկուքն ալ սոյն ժողովին առած են իրենց իշխանութիւնը, մէկն իրրեւ նաւապետ և միւսն իրրև զեկավար. այլ ես աւելորդ է այս մասին դիտողութիւններ ընել և մանրամասնութեանց մէջ մտնել. մեզի համար Պատրիարքը Պատրիարք է և վարչութիւնն ալ վարչութիւն. բայց որովհետև իրարու դէմ գանգատանաց կէտեր մէջ բերած են, խնամ օրինաւոր կըլլայ Յանձնաժողովոյ մը ձեռաք գանգատանաց կէտերը քննել և անհամաձայնութիւնը բառնալ։ Այս նպատակաւ է 17 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութիւնն ալ, որուն իրրև համակարծիք ես ալ ստորագրուած եմ։ Կը մնայ ժողովոյն՝ որ իւր անկողմնակալութեամբը խառն Յանձնաժողով մը բնարէ և օր առաջ անոր տեղեկագիրը պահանջէ խնդրոյն վերջ տալու համար։

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. Էֆ. — 17 Երեսփոխանաց կողմէ առաջարկութիւն մը ներկայացուած է, որ երկու կէտ կը պարունակէ. մին՝ առ ժամանակեայ վարչութիւն մը հաստատել, և

միւսը՝ ցանձնաժողով մը, որ քննէ Պատրիարքին ու Վարչութեան մէջ ծագած անհամաձայնութեան և անոնց հրաժարման պատճառները։ Երկուքին ալ հրաժարականները չենք ընդունած և կրսենք թէ առժամանակեայ Վարչութիւն մը հաստատուի. միթէ կարելի՞ բան է այս։ Նոյնպէս ցանձնաժողով մը դրուի կը-սենք հրաժարման պատճառները քննելու. երկու կողմն ալ իրենց պատճառները մէջ բերած են, որոնց ինչ ըլլալը լաւ հասկցայ. ալ ի՞նչ հարկ կայ քննիչ ցանձնաժողովի։ Պատրիարք և Վարչութիւն անհամաձայն են իրարու հետ. պատճառը սա է որ այս դրաւոր Սահմանադրութիւնը Պատրիարքին և Վարչութեան համար միևնոյն չէ, Պատրիարքը մէկ կերպ կը-հասկընայ Սահմանադրութիւնը և Վարչութիւնն ուրիշ կերպ. հիմա այս ցանձնաժողովն ո՞ր Սահմանադրութեամբ և ի՞նչ հասկացողութեամբ պիտի քննէ, անհասկանալի խնդիր մ'է այս։ Կը ցաւիմ մեր վիճակին վրայ, և միանգամայն ժողովրդեան վրայ, որ եկեր դարման կապասէ մեզմէ. (բողոք քանի մը Երեսփոխանաց կողմէ, և ծափահարութիւն ժողովրդէն)։

Աղաբէկեան Է֊Ի. կը բողոքէ ժողովրդային ծափահարութեան դէմ, ըսելով թէ ես ծափահարութիւն ընդունելու համար եկած չեմ հոս, այլ պարաբս կատարելու։ (Նորէն ծափահարութիւն և շշուկ ժողովրդեան մէջ)։

Ամենապետ Է֊Ի. Ժողովրդեան ծափահարութիւնը կը դպչի, և կը հրաւիրէ Աղաբէկեան Է֊Ի. իւր խօսքից թեզն առնուլ և ամբողջացնել։

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. Է֊Ի. — (շարունակելով) Ասացի թէ այդ ցանձնաժողով որ սահմանադրապէս Պատրիարքն ու Վարչութիւնը պիտի դատէ, և իրաւունքն ո՞ր կողմին ըլլալը պիտի հաստատէ, ո՞ր սահմանադրութեամբ պիտի ընէ իւր դատաստանը. ես 3 տարիէն աւելի է որ Երեսփոխան եղած եմ, քանի՛ անգամ որ առիթն եկաւ, ասացի թէ այս դրաւոր Սահմանադրութիւն անյարմար է մեր Ազգի վիճակին. հիմա ալ որ այս դէպքը պատահեցաւ, յարմար առիթ կը համարիմ արդէն շատ անգամ խօսածս նորէն կրկնելու թէ այս Սահմանադրութիւնը չքայլէր. ուստի և կառաջարկեմ, որ Պատրիարք և Վարչութիւն մնան, հրաժարականներն չընդունուի, և Ընդհանուր ժողովն անմիջապէս այս դրաւոր Սահմանադրութիւնը փոխելու և Վարչական դրութիւնն ուղիղ ճամբու մը մէջ դնելու միջոցներուն ձեռնարկէ։

ՄԷՐԵԷՄ—ԳՈՒԼԻ Ե. Է֊Ի. — Ընդհանուր ժողովոյ առջևին երկու հրաժարագիր ներկայացած է, մէկը Ս. Պատրիարքէն և միւսը Քաղաքական ժողովէն. բայց ոմանք այնպէս կը նկատեն թէ երկուքն ալ ամբաստանագիր են, Ս. Պատրիարքը հրաժարագիր մը բերաւ, և կտակ մը ըրաւ իւր յաջորդին, Սահմանադրութիւնն այս վիճակին մէջ անդործադրելի ըլլալը յառաջ բերելով վերաբերեցէք զայն ըսաւ։ Ս. Պատրիարքինը պարզապէս հրաժարագիր է և բնաւին ամբաստանագրի ձև չունի. մանաւանդ թէ՝ Էս ոչ զոհ կամ բանէմ կրսէ բացարձակապէս։ Իսկ Քաղաքական ժողովը կը հրաժարի ամբաստանելով զՍրբազան Պատրիարքն։ Ըսել է թէ հրաժարական մը կայ Սրբազան Պատրիարքէն՝ դեռ չընդունուած, և ամբաստանութիւն մը կայ Քաղաքական ժողովէն իւր հրաժարականով մէկտեղ։ Այս թիւրիմացութիւնն այսպէս ճշդուելէ ետև, դառնալով եղած առաջարկութեանց, ես համակարծիք չեմ քննիչ և վարչական ցանձնաժողովներ կազմելու և խնդիրը ճապաղ վիճակի մը մէջ թողելու։ Ի՞նչ պիտի նշանակէ հրաժարականներն դեռ չընդունուած Պատրիարքի մը և Քաղաքական ժողովի մը մէջտեղ տատանող Վարչական ցանձնաժողով մը։ Ըստ իս քառս մը պիտի դառնայ այս վիճակը։ Խնդիրն իւր պարզութեան մէջ առնելով կառաջարկեմ որ հրաժարականները կարդաւ քուէի դրուին. նախ և առաջ անոնց վրայ ժողովին որոշումն առնուի և հասկցուի թէ երկուքէն ո՞րը պիտի պակսի և ո՞րը պիտի մնայ, Պատրիա՞րքը թէ Քաղաքական ժողովը. եթէ երկուքին ալ հրաժարականը պիտի ընդունուի, այն ատեն պակասածներուն տեղ նոր ընտրութեան գործը կը բացուի և այսպէսով խնդիրն առանց կընճռռուելու կը լուծուի։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. Է֊Ի. — Երկու ցանձնաժողով առաջարկուեցաւ. մէկը Սրբազան Պատրիարքին և Քաղաքական ժողովին հրաժարման պատճառները քննելու և միւսն ալ Պատրիարքարանն անիշխանութեան մէջ չդնելու համար։ Կարծեմ թէ այս խնդրոյն մէջ ասկէ աւելի լաւագոյն տեսակցութիւն մը չը կրնար ըլլալ. վասնզի Պատրիարքն ոչ հրաժարեցաւ և ոչ չհրաժարեցաւ. ոչ ամբաստանեց և ոչ չամբաստանեց. կարելի է որ ունէր ընելիք մը, բայց թերևս ապդը չվերդովելու համար չըսաւ, և հիմա որչափ ալ ստիպենք չը պիտի ետ առնու իւր հրաժարականը մինչև որ իւր ներքին ցաւերը չրժշկուին։ Ուստի ես ալ 17 Երեսփոխանաց առաջարկութիւնն ստորագրողներէն մին, կը կրկնեմ որ նոյն առաջարկութիւնը քուէի դրուի։

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. Է֊Ի. — Հրաժարականի խնդիրն ամբաստանութեան հետ կը շփոթեն ոմանք. եթէ այս շփոթութիւնը չվերնայ խընդիրն յոռի շրջանի մէջ պիտի իյնայ։ Նախ և առաջ հրաժարման խնդիրն ուշադրութեան առնելու և ընդունուիլը կամ չընդունուիլը վճռելու է։ Ուստի Ցանձնաժողովի կազմութեան խնդիրը մէկդի դնելով, նախ Պատրիարքին հրաժարականը քուէի դնել կ'առաջարկեմ։

ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս. Է֊Ի. — Ընդհանուր ժողովին այսօրուան գումարումը ամենակարևոր խնդրոյ մը համար եղած է, այն է Սրբազան Պատրիարքին հրաժարականը. արդեօք այս հրաժարականը պիտի ընդունուի՞ թէ ոչ, կարծեմ առաջին խորհելիքնիս այս պէտք է ըլլայ։ Սակայն առանց գիտնալու թէ Նորին Սրբազնութիւնն ի՞նչ դիտաւորութեան մէջէ, ոմանք յԵրեսփոխանաց առաջարկութիւն մը բերին, որով 8 օր ետ ձգել կուզեն Սրբազան Պատրիարքի հրաժարման ընդունելութեան կամ ոչ ընդունելութեան խնդիրը։ Դարձեալ Սրբազան Պատրիարքին հրաժարականէն զատ ուրիշ հրաժարական մ'ալ կայ Քաղաքական ժողովէն եկած, որուն մէջ ամբաստանութեան կէտեր կը գտնուին։ Իրաւ է թէ ըստ Սահմանադրութեան Պատրիարքին վրայ ամբաստանութիւն ընելու ինչպէս Ազգային Երեսփոխանութիւնն ու կրօնական ժողովը, նոյնպէս և Քաղաքական ժողովն իրաւունք ունի. բայց ամբաստանող ժողովն իր բողոքագիրը պատրաստելով Բ. Դռնէն հրաման առնելէ ետև Ընդհանուր ժողով պիտի գումարել տայ իւր բողոքին քննութեանը համար։

Քանի որ այսպէս եղած չէ, Քաղաքական ժողովոյ ամբաստանութիւնը մէկդի կը մնայ. ուստի Պատրիարքին դէմ ամբաստանութեան խնդիր չկայ հոս. այլ Պատրիարքին հրաժարականը միայն կայ։ Հիմա ես ալ կը վարանիմ Պառնասեան և Մէրեէմ—Գուլի Էֆէնտիներուն և եղբօրս Մարկոս Էֆէնտիի հետ, թէ ի՞նչպէս այն մարմնոյն՝ որ դահին տէրն է և որ 4 տարուան մօտ Պատրիարքութիւն ըրած է, ըսենք թէ դեռ ես 8 օր պաշտօնիդ վրայ կեցիր. չենք գիտէր իւր հաստատ դիտաւորութիւնը թէ գոնէ մէկ օր ևս պիտի կրնա՞յ կենալ. իսկ թէ որ հրաժարմանը վրայ հաստատ կեցած է, մեր ընելիքն ուրիշ բան չէ, բայց եթէ իւր հրաժարականն ընդունելէ ետև անմիջապէս Ցեղապահ մը կարգել, և այս ալ չէ թէ 8 կամ 10 օրուան գործ է, այլ շատ շատ վաղը կրնայ հաստատուիլ Ցեղապահ մը։ Ուրեմն ի՞նչ հարկ կայ սպասել, անմիջապէս Պատրիարքի հրաժարման խնդիրը քննարկելու լմնցնելու է։ Իսկ միւս առաջարկութեան գալով, նա ալ իր կարգին բացատրութիւններու պէտք ունի. արդեօք քննիչ Ցանձնաժողովն 8 օրուան մէջ ի՞նչ պիտի քննէ։ Ինչպէս արդէն ըսի, դարձեալ կը կրկնեմ որ Քաղաքական ժողովոյ ամբաստանութիւնը՝ քննութեան առնուելու վիճակին մէջ ըստ Սահմանադրութեան. եթէ այսպէս չէ ըստ Սահմանադրութեան, Ցանձնաժողովին գործը Պատրիարքը համոզե՞լ պիտի ըլլայ, որ իւր պաշտօնը շարունակէ։

Ես իմ առաջարկութիւնս ետ կ'առնում եթէ միւս առաջարկութեան այս մութ կէտերը պարզուելով՝ կատարելապէս անոր համոզուիմ։

Ուստի խօսքս ամփոփելով կ'առաջարկեմ որ կամ Սրբազան Պատրիարքին հրաժարականն անմիջապէս քուէի դրուի, և կամ 17 Երեսփոխանաց առաջարկութիւնն ամենայստակ կերպիւ պարզուի։

ՊԷԿԵԱՆ Թ. Է֊Ի. — Առաջարկութիւն կըլլայ ոմանց կողմէ Պատրիարքին հրաժարականը քուէի դնելու համար. չենք կրնար ընդունիլ զայդ, որովհետև մութի մէջ ենք, բացարձակ հրաժարական չէ այն, պատճառներ կը ցուցնէ, թէ եւ կտակ մ'ալ կընէ իր յաջորդին, (ընդմիջում քանի մը Երեսփոխանաց կողմէն)։ ո՛չ, չենք կրնար հրաժարականը քը-

ուէլ գնել առանց պատճառները քննելու. այս նպատակաւ քննիչ Յանձնաժողով մը պէտք է, ինչպէս 17 Երևսփոխանաց դրամ առաջարկեցին եւ ես ալ կը հաստատեմ այս մասին։ Ըստ ենքեան թէ Քաղաքական ժողովոյ կողմէ ամբաստանութիւն կայ Պատրիարքին դէմ. այո՛, կայ, բայց պաշտօնական ամբաստանութիւն չէ, այլ անպաշտօնական է. ամբաստանութեան հոգի կայ, բայց ամբաստանող չկայ. Սահմանադրութիւնը կըսէ թէ ամբաստանութիւնը կամ Պատրիարքին կողմէն կըլլայ ժողովոյ համար, եւ կամ ժողովոյ կողմէ կըլլայ Պատրիարքին համար. առանց ամբաստանութիւն չըրին, փասն զի չհամարձակեցան. (սկիզբ մը ծափահարութեան ժողովրդին կողմէն որ անմիջապէս կը դադրի առ'ի պատիւ ազդարարութեանց դիւանին։) եւ ասոր համար խնդիրը կենձալից կերպարանք առաւ, որովհետեւ պարզ հրաժարական չէր։ Հետեւապէս իրրեւ անհամաձայնութեան խնդիր նկատելով Յանձնաժողով մը դրուիլը կընդունիմ Ս. Պատրիարքին ու Քաղաքական ժողովին մէջ եղած անհամաձայնութեան պատճառները քննելու եւ տեղեկագրելու համար. իսկ գործադիր իշխանութիւն վարող Յանձնաժողովի առաջարկութիւնը կը հերքեմ, քանի որ այդ Յանձնաժողովը Ս. Պատրիարքին նախագահութեանը տակ պիտի գործէ, ինչպէս բաւ Օգէն էֆ. ըսել է թէ Քաղաքական ժողովոյ հրաժարականը գործնականապէս ընդունած պիտի ըլլանք, իսկ Ս. Պատրիարքինը ոչ, եւ ասով առանց անհամաձայնութեան քննութեան արդեանցը վերահասու ըլլալոյ արդարութեան դէմ գործած պիտի ըլլանք։ Ուստի կառաջարկեմ որ քննիչ Յանձնաժողով մը կազմուի անհամաձայնութեան պատճառները քննելու համար, եւ գործադիր իշխանութեան պաշտօնը դարձեալ շարունակեն Ս. Պատրիարքն ու Քաղաքական ժողովը միանգամայն, մինչեւ իրենց անհամաձայնութեան քննութիւնն աւարտի։

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — 17 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութեան Ա. մասը՝ պատճառաբանութեանը մէջ փոփոխութեամբ մը կընդունիմ, իսկ Բ. մասը չեմ ընդունիր։ Պատճառաբանութեան մէջ փոխել ուզած կտորս է Ընդհանուր ժողովը դատաւորի կերպարանք կը զգենու խօսքը։ Ոչ Ս. Պատրիարքին հրաժարիլը, եւ ո՛չ Քաղաքական ժողովոյ անդամոց ոմանց հրաժարիլը, (ոմանց կըսեմ, որովհետեւ 14 անդամներէն 6ը ստորագրած են) երկուքն ալ ամբաստանութիւն չեն բան։ Ս. Պատրիարքն այնպիսի խօսքերով որ իւր սրտէն կը բղխէին եւ զորա ինձի չափ սրտայոյզ ունկնդրութեամբ մտիկ ըրիք, յայտարարեց թէ «ոչ զոք կամբաստանեմ, ինչ-«պէս որ խաղաղութեամբ եկայ Պատրիարքա-«կան գահը բարձրացայ, նոյնպէս կուզեմ խա-«ղաղութեամբ ձգել այս գահը, իմ մենաս-«տանս դառնալ եւ իմ բանս ու գրիչս նորէն «ձեռք առնուլ»։

Ըսել է որ Ս. Պատրիարքին տուած հրաժարականին մէջ չկայ ամբաստանութիւն մը։ Իսկ Քաղաքական ժողովոյ հրաժարականին մէջ եթէ կայ ամբաստանութեան կէտ մը, այն ալ Սահմանադրութեան գործադրութեանը կը վերաբերի. բայց զանի Ս. Պատրիարքն ինք ալ խոստովանեցաւ. իւր գահակալութեան առջի օրէն Մայր եկեղեցւոյ մէջ ՝ուխտեցի, ըսաւ, Սահմանադրութիւնը չէ թէ բառ առ բառ գործադրել, այլ անոր ոգւոյն եւ սկզբանցը հաւատարիմ մնալ, եւ մինչեւ հիմայ իւր ընթացքին մէջ այնպէս վարուած ըլլալն ալ կը յայտնէ. միայն ժամանակէ մը 'ի վեր Քաղաքական ժողովին աւելի բառական գործադրութիւն պահանջելուն համար անհամաձայնութիւն ծագած ըլլալը կերեւի։ Ասոր համար Յանձնաժողով մը դնել պէտք է բայց ոչ թէ ըստ առաջարկութեան 17 Երեսփոխանաց երկու կողմը դատելու համար, որովհետեւ ամբաստանութիւն չըկայ. այլ միայն անհամաձայնութիւն կայ, ասոր համար ցուցուած պատճառներուն կարեւորութեան աստիճանը քննել պէտք է։ Սրբազան Պատրիարքը ոչ զոք կ'ամբաստանէ, բայց դըրութիւնը կ'ամբաստանէ. ո՞ր դրութիւնը, Սահմանադրական դրութիւնը. այդ դրութեան ո՞ր մասերը։ Յայտնի է որ եթէ Ս. Պատրիարքին չընդունածը Սահմանադրութիւնն է, Սահմանադրութիւնը պէտք է մնայ, Պատրիարքը պէտք է իյնայ։ Վերջապէս Ընդհանուր ժողովը որոշում մը չտուած պէտք է այս կէտերը լաւ լուսաբանէին։ Ասի Յանձնաժողովին պաշտօնը պէտք է ըլլայ։ Դալով 17 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութեան Բ. մասին, որ է Պատրիարքարանի գործադիր իշխանութիւնը վարելու համար Յանձնաժողով մը դնել, այդ Յանձնաժողովին բնաւ կարօտութիւն չեմ տեսներ. վասն զի Ս. Պատրիարքը թէ եւ հրաժարական տուած, բայց դեռ պաշտօնէն դադրած չէ եւ Տէրութեան ու Ազգին առջեւ տակաւին Պատրիարք է, նոյնպէս է նաեւ Քաղաքական ժողովը. ուստի առանց դարձեալ կրնան եւ պարտաւոր իսկ են շարունակել առայժմ իրենց պաշտօնը։ Ուստի եզրակացնելով կըսեմ թէ 17 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութեան Ա. մասին համակարծիք եմ վերցնելով դատաւորի կերպարանք կը զգենու բառերը. իսկ Բ. մասը բոլորովին աւելորդ կը դատեմ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն դուք ալ գրեթէ կը ձայնակցիք Ալկեան էֆ.ին առաջարկութեանը։

Այս միջոցին գրաւոր առաջարկութիւնն ստորագրող երեսփոխանաց կողմէ ալ յայտարարութիւն եղաւ թէ իրենք ալ իրենց առաջարկութեան Բ. մասն եւս առնելով կը համաձայնին Օտեան էֆէնտիի սրբագրութեանը։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըսել է թէ երկու առաջարկութիւն կայ հիմա. մէկն է հրաժարականներն ընդունելու կամ չընդունելու խնդիրն եւ ձգել եւ քննիչ Յանձնաժողով մը դնել. իսկ միւսն է հիմակուընէ հրաժարական խնդիրը քուէի դնել։

Շատ մը ձայներ. — Ո՛չ. այնպէս չէ. մէկ առաջարկութիւն մը կայ, միւսն ալ ետ ձգուեցաւ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ո՞րն է ետ ձգուածը։

ՄԷՐԵԷՄ — ԳՈՒԼԻ Ե. ԷՖ. — Քանի որ վարչական գործադիր Յանձնաժողովի մասն ետ թողուեցաւ, ես ալ առաջարկութիւնս ետ առնելով կը համաձայնիմ միւս առաջարկութեան. որով մէկ առաջարկութիւն կըմնայ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ լաւ, քանի որ մէկ առաջարկութիւն մը մնաց, եթէ ժողովը պատշաճ դատէ վիճաբանութիւնը գոցել, առաջարկութիւնը քուէի պիտի դնեմ, վասն զի ժամանակն ուշ է արդէն եւ խնդիրն ալ, կարծեմ, բաւական պարզեցաւ։ Իսկ թէ որ վիճաբանութեան շարունակութեանը հարկ տեսնուի, դալ նստին կըմնայ։

Բազմաթիւ ձայներ. — Քուէ, քուէ։

Ս. ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Ես խօսք ուզած էի. 17 Երեսփոխանաց գրաւոր առաջարկութիւնն ստորագրողներէն մին ես եմ, ես ետ չեմ առած։

Դարձեալ ամէն կողմէն ձայներ. — Քուէ, քուէ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (Առ Խորէն Սրբազան) — Դուք արդէն ձեր խօսքին կարգն Օտեան էֆէնտիին տուիք. եւ որովհետեւ քուէ ուզողները կը շատնան, եթէ նորէն ձեզի խօսք տալու ըլլամ, ուրիշներն ալ պիտի ուզեն խօսիլ։ Այսու ամենայնիւ Ձեր Սրբազնութիւնը կրնայ խիստ համառօտաբար ձեւացընել իր առաջարկութիւնը որ բնականաբար, հիմակուան խօսքերուն նայելով, 17 Երեսփոխանաց առաջարկութեան՝ որոյ ինք ալ մասնակից է, ամփոփումն ու կրկնումը եղած պիտի ըլլայ։

Երրորդ անգամ անհամբեր ձայներ — Քուէ՛, քուէ՛։

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ես ալ խօսք ուզողներէն մին եմ, եւ Խորէն Սրբազանէն առաջ կարգն իմն է. անոր խօսելուն արգելք ըլլալ չեմ ուզեր, բայց կարգի բռնաբարութիւն ալ չեմ ընդունիր։

Առենապետ էֆ. տեսնելով որ առաջարկութիւնը քուէի դնելու ձայները կընդհանրանան եւ հետզհետէ անհամբերութեան կերպարանք կառնեն, յայտարարեց թէ վիճաբանութիւնը գոցուած է. եւ թէպէտ Խորէն Սրբազանը պահ մը բողոքել արժան դատեց դիւանին դէմ իրեն խօսք չը տրուելուն համար եւ ժողովէն դուրս ելլալու դիտաւորութիւն մ'ալ յայտնեց, բայց անմիջապէս նկատողութեան առնելով նոյն ժամու վիճակին փափկութիւնն ու ծանրութիւնը չուզեց ընդհանրութեան կամքին դէմ շարժիլ, որով վերջէն հաճութիւն տուաւ ինք ալ վիճաբանութիւնը գոցուելուն։

Ուստի առաջարկութեան ձեւը Օտեան էֆէնտիի սրբագրութեանը համեմատ խմբագրուելով կարդացուեցաւ, որ է հետեւեալը.

«Նկատելով որ Ընդհանուր ժողովոյս ե-«կած հրաժարագրերը պատճառաբանեալ են, «կ'առաջարկենք որ Յանձնաժողով մը կազմուի «հրաժարականներուն պատճառները քննելով «մինչեւ ութն օր տեղեկագրով մը իր քննու-

« Թեան արդիւնքը ժողովոյս ներկայացնելու « համար » ։

Սոյն առաջարկութիւնը քուէի դրուելով, 10 քուէի դէմ 55 քուէով ընդունուեցաւ ։

Դիւանին առաջարկութեամբ քննիչ Ցանձնաժողովոյ անդամ ընտրուեցան ազգային Ներեպիսկոպոսներէն ,

Տ. ԹՈՐԼԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Տ. ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ ՓԱՀԱՆԱՑ
ՕՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ
ՏԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼ ՊԷՑ
ԱՂԱԲԷԿԵԱՆ ՍԱՐԳԻՍ ԷՖԷՆՏԻ

Ժողովն այս ընտրութիւնը հաստատելէ ետեւ , դիւանին յանձնեց որ Ցանձնաժողովոյ անդամներն իրենց պաշտօնին հրաւիրէ , եւ միանդամայն Սրբազան Պատրիարքին եւ Քաղաքական ժողովոյն ծանուցանէ Ընդհանուր ժողովոյն որոշումը ։

Ցանձնաժողովոյն տրուած 8 օրուան պայմանաժամը խիստ կարճ երեւնալով չատերուն , առաջարկեցին դիւանին՝ որ յաջորդ նիստը մինչեւ 15 օր երկարաձգուի , եթէ Ցանձնաժողովը չկարենայ իւր պաշտօնը 8 օրուան մէջ աւարտել ։

Ատեանը զոցուեցաւ ժամը 11 ին քառորդ մնացած ։

Էֆենտիներ Էֆենտիներ
ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ

ԴԻՆ Չ ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑԻՆ Ի ՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի Ի Դիւանատան Պատրիարքարանին, և կը գտնուի ամեն գրավաճառաց քով և Եկեղեցեաց բանկալնեերը։